# ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/EUROPEAN UNIVERSITY

## 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ/

## ANNUAL REPORT OF 2021-2022 ACADEMIC YEAR

Երևան/ Yerevan 2022

## ԱՌԱՋԱԲԱՆ

Հարգելի՛ շահառուներ,

Հաշվետու տարին Հայաստանի եվրոպական համալսարանի համար եղել է կայուն զարգացման տարի, բուհը հաջողություններ և աճ է գրանցել իր գործունեության գրեթե բոլոր ուղղություններով՝ իր ուրույն տեղը ապահովելով Հայաստանի բարձրագույն կրթության համայքնում:

2021-2022 ուսումնական տարում աճել է ուսանողների և դիմորդների թիվը, բարելավվել և թարմացվել են գրադարանային, լաբորատոր, նյութատեխնիկական բազաները, շենքային պայմանները, կառուցվել է փակ սպորտային դահլիճ, ուսանողական ճաշարան, ուժեղացվել է անվտանգության համակարգը և ընդհանուր առմամբ բարելավվել է կրթական միջավայրը:

Գործատուների հետ կնքված մի շարք պայմանագրերի արդյունքում կբարելավվեն մասնագիտությունների կրթական ծրագրերը, պրակտիկաների կազմակերպումը, կիրականացվեն գործնական և վարպետաց դասեր:

Բուհը մեծ ջանքեր է գործադրում ՀԵՀ-ի ճանաչելիության բարձրացման գործում՝ ինչպես հայաստանյան, այնպես էլ եվրոպական բարձրագույն կրթության միջավայրում՝ մասնակցելով հայաստանյան և եվրոպական սեմինարների, քննարկումների, ցուցահանդեսների, աշխատաժողովների, գիտաժողովների՝ ներկայացնելով բուհը, ինչպես նաև ՀԵՀ

## INTRODUCTION

Dear stakeholders,

The reporting year was a year of stable development for the European University of Armenia (EUA). The university has recorded success and growth in almost all directions of its activities, securing its unique place in the Armenian higher education community.

In the 2021-2022 academic year, the number of students and applicants increased, the library, laboratory, material and technical bases, building conditions were improved and updated, a closed sports hall, a student cafeteria was built, the security system was strengthened and the educational environment was improved.

As a result of a number of agreements concluded with employers, professional educational programs, and the organization of internships will be improved, also practical and master classes will be implemented.

The university makes great efforts in raising the recognition of EUA, both in the Armenian and European higher education environment, by participating in Armenian and European seminars, discussions, exhibitions, workshops, conferences, presenting the university, as well as by bringing the acquired to EUA.

Strengthening the culture of quality at all levels of the university's activity has been and remains one of the important directions of development of the EUA.

In the reporting year EUA branches were also in the focus of the

բերելով ձեռք բերվածը:

ՀԵՀ զարգացման կարևոր ուղղություններից եղել և մնում է որակի մշակույթի ամրապնդումը բուհի գործունեության բոլոր մակարդակներում:

ՀԵՀ մասնաճյուղերը նույնպես հաշվետու տարում եղել են բուհի ուշադրության առանցքում, որոնց շուրջ փորձ է արվում արդյունավետ գործունեության նոր մոդելներ մշակել:

Հաշվետվության համար հիմք են ծառայել ՀԵՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան և կիսամյակային հաշվետվությունները, որոնք քննարկվել և հաստատվել են ՀԵՀ գիտական խորհրդի կողմից:

Այսպիսով, սույն հաշվետվությունում ամփոփ ներկայացված են ՀԵՀ գործունեության արդյունքները՝ բոլոր ուղղություններով՝ 2021-2022 ուսումնական տարվա կտրվածքով:

Ռեկտոր
մ.գ.թ., դոցենտ Հ. Բիշարյան

university's attention, around which an attempt is made to develop new models of effective activity.

The basis for the report was the annual and semi-annual reports of all EUA structural units, which were discussed and approved by the EUA Scientific Council.

Thus, this report summarizes the results of the EUA activities in all directions for the 2021-2022 academic year.

Rector
The candidate of pedagogical sciences,
Associate professor
H. Bisharyan

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Եվրոպական համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական ու գիտատեխնիկական գործունեությունը պլանավորում, համակարգում և կարգավորում է ՀԵՀ գիտական խորհուրդը ռեկտորի նախագահությամբ:

ՀԵՀ Գիտական խորհրդի 25%-ը ՀԵՀ ուսանողներն են, 25%-ը՝ ի պաշտոնե անդամները, 50%-ը՝ ընտրովի անդամներ:

ՀԵՀ Գիտական խորհրդի 55%-ը ունեն գիտական կոչում, որոնց 47%-ը գիտության դոկտորներն են:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում հրավիրվել է թվով 9 գիտական խորհրդի նիստ, որոնց ընթացքում.

- հաստատվել է թվով 10 ասպիրանտների և հայցորդների գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեմաներ և գիտական ղեկավարներ,
- ՀԵՀ գիտական խորհրդի կողմից տպագրության են երաշխավորվել.
  - «Եվրոպական համալսարանի» գիտական հոդվածների ժողովածուներ՝ 12(02) և 13(01),
  - ՀԵՀ Կառավարման ամբիոնի դասախոս տնտ. թեկնածու Կարինե Սարգսյանի «Էլեկտրոնային կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկը,
  - Ժաննա Հակոբյանի «Գործնական ռուսաց լեզու» ուսումնամեթոդական նյութերի ձեռնարկը,
  - ՀԵՀ իրավագիտության ամբիոնի դասախոսվ Վ.

## EDUCATIONAL PROCESS

The teaching-methodological, research and scientific-technical activities of the European University are planned, coordinated and regulated by the EUA Scientific Council chaired by the Rector.

25% of the EUA Scientific Council are EUA students, 25% are ex-officio members, 50% are elective members.

55% of the EUA Scientific Council has a scientific degree, 47% of which are Doctors of Science.

9 sessions of the Scientific Council were convened in 2020-2021 academic year, during which:

- 10 postgraduate themes for acquiring the degree of Candidate of Science and their Scientific supervisors were approved,
- The following documents have been recommended for publication by the EUA Scientific Council:
  - “European University” collections of scientific articles: 12(02) and 13(01);
  - "Electronic management" educational and methodological manual, author: Karine Sargsyan, PhD in Economics, Associate Professor of the EUA Department of Management,
  - "Practical Russian Language" educational materials manual, author: Zhanna Hakobyan,
  - "Constitutional Law of the Republic of Armenia" educational manual, author: V. Poghosyan, lecturer at EUA Chair of Law

Պողոսյանի «ՀՀ Սահմանադրական իրավունք» ուսումնամեթոդական ձեռնարկը:

Բուհի բնականոն գործունեությունը կազմակերպվում է 115 վարչական, որի 25%-ը՝ մարզերում, և 185 պրոֆեսորադասախոսական աշխատակիցների միջոցով, որի 35%-ը մարզերում:

2021-2022 ուստարում ՀԵՀ պրոֆեսորադասախոսական կազմը ըստ գիտական աստիճանի ու կոչման ներկայացված է գծապատկերում (տե՛ս գծապատկեր 1):

The normal activity of the university is organized by 115 administrative staff, 25% of which are in the regions; and by 185 academic staff, 35% of which are in the regions.

In 2021-2022 academic year the EUA academic staff with academic degrees and titles are represented in the chart (see Chart 1).




**Գծապատկեր/Chart 1. ՀԵՀ պրոֆեսորադասախոսական կազմը՝ ըստ գիտական աստիճանի և կոչման 2017-2022թթ./ EUA academic staff with academic degrees**

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՀԵՀ ուսանողների թիվը 2021-2022 ուստարում նախորդ տարվա համեմատ աճել է 9%՝ կազմելով 1908, որոնցից՝

- առկա ուսուցման բակալավրիատում՝ 806 ուսանող
- հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 983 ուսանող,
- առկա ուսուցում մագիստրատուրայում՝ 93 ուսանող,
- հեռակա ուսուցում մագիստրատուրայում՝ 26 ուսանող:

Բուհի ուսանողների թվի 36%-ը Կապանի, Իջևանի, Գյումրու և Վանաձորի մասնաճյուղերի ուսանողներ են:

2021-2022 ուստարում ՀԵՀ Երևանի ուսանողների ընդհանուր թվի /1199 ուսանող/ շուրջ 13%-ը հանդիսացել են այլ երկրների քաղաքացիներ: Այդ թվում՝

- Առկա բակալավրիատ՝ 135 ուսանող,
- Հեռակա բակալավրիատ՝ 1 ուսանող,
- Առկա մագիստրատուրա՝ 24 ուսանող:

Եվրոպական համալսարանում գործում է նախապատրաստական բաժին, որը 2021-2022 ուստարում ունեցել է 328 սովորողներ, որոնց շուրջ 55%-ը օտարերկրացիներ են:

2021-2022 ուստարվա ընթացքում անբավարար առաջադիմության, բացակայությունների և այլ պատճառներով ՀԵՀ-ից հեռացվել կամ ազատվել են 281 ուսանող, որից՝

- առկա բակալավրիատ՝ 116 ուսանող,
- հեռակա բակալավրիատ՝ 165 ուսանող,

## STUDENTS

The number of EUA students in the 2021-2022 academic year increased by 9% compared to the previous year, becoming 1908, and as a result of which we have the following picture:

- Full-time Bachelor’s Degree: 806 students,
- Part-time Bachelor’s Degree: 983 students,
- Full-time Master’s degree: 93 students,
- Part-time Master’s Degree: 26 students.

36% of the university students are students from Kapan, Ijevan, Gyumri and Vanadzor branches.

In the 2021-2022 academic year, about 13% of the total number of EUA Yerevan students (1199 students) were citizens of other countries, including:

- Full-time Bachelor’s Degree: 135 students,
- Part-time Bachelor’s Degree:  1 student,
- Full-time Master’s degree: 24 students.

There is a preparatory division at the European University of Armenia, which in 2021-2022 academic year had 328 students, about 55% of whom are foreigners.

During 2021-2022 academic year, 281 students have been dismissed or expelled from EUA due to insufficient progress, absences and other reasons:

- Full-time Bachelor’s Degree:  116 students,
- Part-time Bachelor’s Degree:  165 students,

- առկա մագիստրատուրա՝ 13 ուսանող,
- հեռակա մագիստրատուրա՝ 5 ուսանող:

Վերականգնվել կամ այլ բուհերից տեղափոխվել են 53 ուսանող, որից

- առկա բակալավրիատ՝ 38 ուսանող,
- հեռակա բակալավրիատ՝ 15 ուսանող:

Մասնագիտության կրթական ծրագրերի իրականացումն ապահովելու նպատակով ՀԵՀ գրադարանը շարունակական համալրվում է: Հաշվետու տարվա ընացքում ձեռք է բերվել 168 մասնագիտական գիրք, որի 5%-ը իրավագիության, 15%-ը Զբոսաշրջության, 40%-ը Հոգեբանության, 9% Գրաֆիկական դիզայնի, 23% տնտեսագիտական մասնագիտություններով, 10%-ը՝ գեղարվեստական գրականություն, ինչպես նաև 1081 էլեկտրոնային գրքեր:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ՀԵՀ գրադարանից օգտվել են 736 ուսանող, որից 281 իրավագիտություն /38.2%/, 254 տնտեսագիտություն /34,4%/, 39 միջազգային հարաբերություններ/5.3%/, 61 զբոսաշրջություն /8.2%/, 21 լեզվաբանություն /2.8%/, 21 հոգեբանություն /2.8%/, 14 գրաֆիկ դիզայն/1.9%/, 19 տեղեկատվական տեխնոլոգիաներ /2.5%/, այդ թվում ՝Միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի մասնագիտցումներում սովորողները, 26 նախապատրաստական բաժնի /3.5%/ ուսանողներ:

Հատկանշական է, որ գրադարանից օգտվող ուսանողների մեծամասնությունը (38.2%) Իրավագիտություն մասնագիտությունից են, սակայն գրականության ձեռք բերման հարցում

- Full-time Master's degree: 13 students,
- Part-time Master's degree: 5 students,

53 students were re-enrolled or transferred from other universities:

- Full-time Bachelor's Degree: 38 students,
- Part-time Bachelor's Degree: 15 students.

In order to ensure the implementation of the professional educational programs, the EUA library is continuously replenished. At the beginning of the reporting year, 168 professional books were purchased, 5% of which were on law, 15% on tourism, 40% on psychology, 9% on graphic design, 23% on economics, 10% on fiction, as well as 1081 electronic books.

During the 2021-2022 academic year, 736 students used the EUA library, of which 281 were law studies (38.2%), 254 economics (34.4%), 39 international relations (5.3%), 61 tourism (8.2%), 21 linguistics (2.8%), 21 psychology (2.8%), 14 graphic design (1.9%), 19 information technologies (2.5%), including students specializing in microelectronic circuits and systems, and 26 preparatory department (3.5%) students.

It is noteworthy that the majority of students using the library (38.2%) are from the faculty of Law, but in terms of purchasing literature, legal literature is one of the least purchased literatures (5%).

իրավագիտության գրականությունը ամենաքիչ ձեռքբերված գրականություններից մեկն է (5%):

| | | |
|---|---|---|
| <u>Մասնակցություն «Գրադարանավարների մասնագիտական վերապատրաստում» թեմայով դասընթացներին</u><br>Հայաստանի եվրոպական համալսարնի գրադարանի տնօրեն Մարիամ Վարդերեսյանը և գրադարանի աշխատակից Մանե Խաչատրյանը մասնակցեցին Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կողմից կազմակերպված «Գրադարանավարների մասնագիտական վերապատրաստում» դասընթացներին: |  | <u>Participation in the trainings on "Professional training of librarians"</u><br>Mariam Varderesyan, Director of the Library of the European University of Armenia, and Mane Khachatryan, Library staff member of the European University of Armenia, participated in the trainings on "Professional Training of Librarians" organized by the Brusov State University. |
| <u>«Զուլալի» ֆիլմի ներկայացում և ցուցադրում ՀԵՀ-ում</u><br>Հայաստանի եվրոպական համալսարանի գրադարանի նախաձեռնությամբ՝ կազմակերպվել էր Նարինե Աբգարյանի «Զուլալի» նովելի հիման վրա նկարահանած բեմադրող ռեժիսոր և պրոդյուսեր Հայկ Օրդյանի համանուն ֆիլմի դիտում-քննարկում: Միջոցառման շրջանակներում ուսանողների հետ հանդիպման էին եկել ռեժիսոր Հակ Օրդյանը, գլխավոր դերասանուհի Հերմինե Ստեփանյանը և սպասարկող անձնակազմը: |  | <u>"Zulali" film presentation and showing in EUA</u><br>On the initiative of the Library of the European University of Armenia, it organized a screening-discussion of the film of the same name by director-producer Hayk Ordyan based on Narine Abgaryan's novel "Zulali". Director Hak Ordyan, main actress Hermine Stepanyan and the staff came to meet with the students within the framework of the event. |

Գիրք նվիրելու օրվա առթիվ ՀԵՀ-ն հյուրընկալեց Սամվել Մուրադյանին

2022 թվականի փետրվարի 21-ին ՀԵՀ գրադարանի նախաձեռնությամբ՝ ՀԵՀ-ում նշվեց Գիրք նվիրելու տոնական օրը, որի հյուրն էր գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի գրողների միության անդամ Սամվել Մուրադյանին:



EUA hosted Samvel Muradyan on the occasion of Book Donation Day

On February 21, 2022, on the initiative of EUA Library, it was celebrated Book Donation Day in EUA. EUA hosted Samvel Muradyan, literary critic, Doctor of Philological Sciences, Professor, Honored Scientist of the Republic of Armenia, member of the Writers' Union of Armenia.

***Եվրոպական համալսարանի ուսանողները բացի կրթական գործունեությունից ՀԵՀ ուսանողական խորհրդի գլխավորությամբ ակտիվորեն մասնակցում են երկրում հասարակական, կրթական, մշակութային և այլ բնույթի ուսումնադաստիարակչական միջոցառումների:***

***In addition to the educational activities, European University students headed by the EU Student Council, actively participate in social, educational, cultural and other educational activities in the country.***

ՀԵՀ ուսանողները մասնակցեցին 7-րդ ռուս-հայկական երիտասարդական ֆորումին

2021թ. դեկտեմբերի 8-11-ը Ն.Է. Բաումանի անվան Մոսկվայի պետական տեխնիկական համալսարանում տեղի ունեցավ 7-րդ ռուս-հայկական երիտասարդական ֆորումը, որին մասնակցեցին ՀԵՀ ուսանողներ՝ ՀԵՀ ուսանողական խորհրդի նախագահ Հայկ Երոյանը և ուսանող Լևոն Խաչատրյանը:

Ֆորումի շրջանակներում տեղի ունեցան




EUA students participated in the 7th Russian-Armenian Youth Forum

The 7th Russian-Armenian Youth Forum took place at the Bauman Moscow State Technical University on December 8-11, 2021.

The forum was attended by the European University of Armenia which was honorably represented by EUA students: EUA Student Council President Hayk Yeroyan and student Leon Khachatryan.

այցելություններ Ռուսաստանի և Հայաստանի երիտասարդության միջև փոխգործակցություն իրականացնող հաստատություններ և կազմակերպություններ:

**Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ - հաղթանակ և պարգևատրում**

2021թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի եվրոպական համալսարանում տեղի ունեցավ «Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» ինտելեկտուալ խաղի համաբուհական առաջնությունը:



**What, Where, When? - Victory and Awards**

The "What? Where? When?" intellectual game championship took place at the European University of Armenia on December 7, 2021.

**Շարունակվում են ՀՀ Ուսանողական մարզական 22-րդ խաղերը**

2021թ. նոյեմբերի 11-ին ՀՊՏՀ-ում կայացավ ՀՀ Ուսանողական մարզական 22-րդ խաղերի ուժային եռամարտի առաջնությունը, որին մասնակցություն ունեցավ 12 բուհերի 100 ուսանող:

Առաջնությունում ՀԵՀ-ի կողմից մրցանակային տեղեր զբաղեցրեցին՝ Գրիգոր Հարությունյանը՝ (Կառավարում, 5-րդ կուրս, հեռակա)՝ 1-ին տեղ, Լիլիթ Մելիքջանյանը՝ (Կառավարում, 3-րդ կուրս, հեռակա) 1-ին տեղ, Ռոբերտ Անանյանը՝ (Կառավարում, 3-րդ կուրս,



**The 22nd Student Sports Games of the Republic of Armenia are going on**

On November 11, 2021, championship of the 22nd Student Sports Games of the Republic of Armenia took place at ASUE, in which 100 students of 12 universities.

Prize-winning places in the championship by EUA: Grigor Harutyunyan (Management, 5th year, remote) - 1st place, Lilit Melikjanyan (Management, 3rd year, remote) - 1st place, Robert Ananyan (Management, 3rd year, current) - 3rd place, Karen Kirakosyan (Management, 1st year, current) - 3rd place,

առկա) 3-րդ տեղ, Կարեն Կիրակոսյանը (Կառավարում, 1-ին կուրս, առկա) 3-րդ տեղ:

*Ուսանողների մասնագիտական կարողությունների բարձրացման նպատակով Եվրոպական համալսարանի կարիերայի կենտրոնի կողմից պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստումներ և վարպետաց դասեր ոլորտի պրակտիկ ներկայացուցիչների հետ, ովքեր իրենց փորձն ու գիտելիքներն են փոխանցում ուսանողներին:*

*In order to improve students' professional abilities, the Career Center of the European University of Armenia regularly organizes trainings and master classes with practical representatives of the field, who pass on their experience and knowledge to students.*

Հանդիպում ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչների հետ՝ «Տաղանդների ներգրավման ծրագիր» խորագրի ներքո

2022թ. ապրիլի 26-ին, ժամը՝ 12:00-ին, ՀԵՀ-ում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի կենտրոնական բանկի ներկայացուցիչների հետ՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյանի գլխավորությամբ: Հանդիպումն անցկացվեց «Տաղանդների ներգրավման ծրագիր» խորագրի ներքո:



A meeting with the representatives of the Central Bank of the Republic of Armenia under the title "Talent Attraction Program"

A meeting with the representatives of the Central Bank of Armenia led by Hovhannes Khachatryan, Deputy Chairman of the Central Bank of Armenia, took place on April 26, 2022, at 12:00 in the European University of Armenia. The meeting was held under the title "Talent Involvement Program".

Հանդիպում Դիջիթեյնի հետ

Հայաստանի #SS ոլորտի խոշորագույն ընկերություններից մեկի՝ #Դիջիթեյնի ներկայացուցիչները 2022 թվականի ապրիլի 12-ին հյուրընկալվել էին Հայաստանի եվրոպական համալսարանում:




Meeting with Digitain

The representatives of one of the largest IT companies in Armenia, Digitain, were hosted at the European University of Armenia on April 12, 2022.

## ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Բակալավրի և մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորումը տեղի է ունեցել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության միջոցով:

Հաշվետու ժամանակաշրջանում /2021-2022 ուստարի/ 304 ուսանող ամփոփիչ ատեստավորման արդյունքում ստացել են բակալավրի որակավորման և մագիստրոսի որակավորման դիպլոմներ, այդ թվում՝

- Առկա բակալավրիատ՝ 130 ուսանող,
- Հեռակա բակալավրիատ՝ 108 ուսանող,
- Առկա մագիստրատուրա՝ 45 ուսանող
- Հեռակա մագիստրատուրա՝ 21 ուսանող:

2020-2021 ուստարում այդ ցուցանիշը կազմել է 267, 2019-2020թ.-ին՝ 326, 2018-2019թ.-ին՝369, 2017-2018թ.-ին՝ 268, 2016-2017թ.-ին՝ 386, 2015-2016թ.-ին՝ 464 ուսանող:

Վերջին տարիների շրջանավարտների թվաքանակի

## GRADUATES

The final attestation of the bachelor’s and master’s degree took place through the defense of the graduation papers and masters theses.

In the reporting period /2021-2022 academic year/, as a result of final attestation 304 students received Bachelor's degree and Master's degree diplomas.

- Full-time Bachelor’s degree: 130 students,
- Part-time Bachelor’s degree: 108 students,
- Full-time Master’s degree: 45 students,
- Part-time Master’s degree: 21 students.

In 2020-2021 academic year the indicator of the number of students was 267, in 2019-2020 academic year it was 326, in 2018-2019 academic year it was 369, in academic year it was 268, in 2016-2017 academic year it was 386, in 2015-2016 academic year it was 464 (students).

The change in the number of graduates in recent years is

փոփոխությունը ներկայացված է ստորև (տե՛ս գծապատկեր 2). presented below (see Figure 2).




Գծապատկեր/Chart 2. Շրջանավարտների թիվը 2013-2021թթ. / Number of graduates: 2013-2021

2021-2022 ուստարվա շրջանավարտների 11%-ը ստացել է գերազանցության դիպլոմ, այդ թվում՝ 12 ուսանող՝ բակալավրի որակավորմամբ և 20 ուսանող մագիստրոսի որակավորմամբ:

In 2021-2022 academic year, 11% of EUA graduates received diplomas of excellence, including 12 Bachelor’s degree students and 20 Master’s degree students.

## ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Եվրոպական համալսարանի ուսանողներին տրամադրվում են ուսման վարձի փոխհատուցումներ ինչպես պետության, այնպես էլ բուհի կողմից:

ՀՀ ԿԳՄՍՆ սահմանված կարգով Բուհի ուսանողներին տրամադրվում են փոխհատուցում՝ վարձավճարից, հետևյալ չափանիշների հիման վրա.

- Արտոնություններից օգտվողներին (ուսման վարձի լրիվ փոխհատուցում)
- Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում
- Պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում

2021-2022 ուստարվա ընթացքում տրամադրված զեղչերը ներկայացնենք ստորև (տե՛ս աղյուսակ 1).

## TUITION FEE REIMBURSEMENT

Tuition reimbursement is provided to EUA students by both the state and the university.

In accordance with the procedure established by the RA Ministry of Education, Science, Culture and Sports, the University students are provided with compensation from the tuition fee, based on the following criteria:

- Beneficiaries (full tuition reimbursement)
- Full reimbursement of tuition fees by the state
- Partial reimbursement of tuition fees by the state

The discounts provided during 2021-2022 academic year are presented below: (see chart 1).

**Աղյուսակ/ Chart 1. Պետության կողմից ուսնողների վարձի փոխհատուցում/ Reimbursement of tuition fees by the state**

| N | ՏԵՍԱԿ/ TIPE | ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ/ BACHELOR’S DEGREE |
|---|---|---|
| 1 | Արտոնություններից օգտվողներին/ Beneficiaries | 26 ուսանող/students |
| 2 | Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում (այդ թվում՝ «Պատիվ ունեմ» ծրագրով)/ Full reimbursement of tuition fees by the state (Including “Pativ unem” program) | 5 ուսանող/students |
| 3 | Պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում/ Partial reimbursement of tuition fees by the state | 209 ուսանող/students |

Համալսարանի կողմից ուսանողներին տրվում են զեղչեր Բուհի հաշվին՝ հետևյալ չափանիշներից ելնելով և համամասնություններով (տե՛ս աղյուսակ 2).

In addition to the above, the students of the University are given discounts at the expense of the University, based on the following criteria: (see chart 2).

Աղյուսակ/Chart 2. 2021-2022 ուստարում Բուհի կողմից ուսանողներին տրամադրված զեղչերը/ Discounts provided to students by the University in 2021-2022 academic year

| N | Զեղչի Տեսակ/ Discount Type | 10% | 15% | 20% | 25% | 30% | 50% | 75% | 100% | Total |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ապրիլյան պատերազմի մասնակիցներին/ Participants of the April War | | | | | 4 | 7 | | | 11 |
| 2. | Մարտական հերթափոխի մասնակիցներին/ Participants of the combat shift | | 48 | | | | | | | 48 |
| 3. | Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին/ Children from socially vulnerable families | 7 | | 9 | 3 | | | 1 | | 20 |
| 4. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներին/ One-sided orphans | 13 | | | | | | | | 13 |
| 5. | Սիրիահայ ուսանողներին տրամադրվող զեղչ/ Syrian-Armenian students | | | 77 | | | | | | 77 |
| 6. | Հաշմանդամ ծնող ունեցող երեխաներին/ Children with disabled parents | | 3 | | | | | | | 3 |
| 7. | Նույն ընտանիքից ՀԵՀ-ում երկու ուսանող միաժամանակ ունենալու դեպքում/ Two students from the same family in EUA at the same time | | 17 | | | | | | | 17 |
| 8. | Աշխատակիցների երեխաներին/ Children of the employees | | | | 10 | | | | | 10 |
| 9. | Առաջադիմության հիմքով/ On the basis of progress | | | | 11 | | 8 | 9 | 1 | 29 |
| 10. | ՀԵՀ նախապատրաստականից և քոլեջներից ընդունված/ Students admitted from EUA preparatory courses/department and colleges | 71 | | | | | | | | 71 |
| ԸՆԴԱՄԵՆԸ/ TOTAL | | 91 | 68 | 86 | 24 | 4 | 15 | 10 | 1 | 299 |

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ 2022Թ.

## ADMISSION RESULTS 2022

2022թ.-ին ՀԵՀ ընդունվել են շուրջ 1024 դիմորդ: Ընդունելության արդյունքներն ըստ մասնագիտությունների հետևյալն են (տե՛ս աղյուսակ 3).

In 2022[1], about 1024 applicants have been admitted to EUA. Admission results by specialties are as follows: (see chart 3).

### Աղյուսակ/Chart 3. 2022թ. ընդունելության արդյունքները/ ADMISSION RESULTS 2020

| N | Մասնագիտություն/ Specialty | Բակալավրիատ/ Bachelor's degree | | | Մագիստրատուրա/ Master's Degree | | | Քոլեջից 2-րդ կուրս/ 2nd year from college | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առկա/ Full-time | | Հեռակա/ Part-time | Առկա/ Full-time | | Հեռակա/ Part-time | Առկա/ Full-time | Հեռակա/ Part-time |
| | | ՀՀ/ RA | Օտար/ Foreign | ՀՀ/ RA | ՀՀ/ RA | Օտար/ Foreign | ՀՀ/ RA | ՀՀ/ RA | ՀՀ/ RA |
| 1. | Տեղեկատվական տեխնոլոգիաներ/ Information Technologies | 72 | 21 | 75 | 3 | 4 | | | 27 |
| 2. | Տեղեկատվական համակարգեր /մուլտիմեդիա/ / Information Systems / Multimedia / | | | | | | | | 3 |
| 3. | Տեղեկատվական անվտանգություն / Information security | 3 | | | | | | | |
| 4. | Ինֆորմատիկա /Ռոբոտատեխնիկա և խելացի համակարգեր/ / Informatics /Robotics and Smart Systems/ | 5 | | 4 | | | | | 14 |
| 5. | SS /Կապի միջոցների և միկրոէլեկտրոնային սխեմաներ/ Information Technologies /Synopsis: Communication means and microelectronic circuits/ | | | | 23 | | | | |
| 6. | Գրաֆիկական դիզայն/ Graphic design | 22 | | | 1 | | | | 2 |
| 7. | Սերվիս/ Service | 23 | | 14 | | | 2 | | 22 |
| 8. | Մարքեթինգ / Marketing | | | | | | | | 5 |
| 9. | Տնտեսագիտություն/ Economics | | | 1 | | | | | |
| 10. | Կառավարում/ Management | 52 | 14 | 134 | 10 | | 3 | | 40 |
| 11. | Ֆինանսներ/ Finances | 26 | | 26 | | | | | 25 |
| 12. | Իրավագիտություն/ Law | 84 | | 86 | 10 | | 10 | | 3 |
| 13. | Միջազգային հարաբերություններ/ International relations | 22 | 2 | 11 | 8 | 5 | | | |
| 14. | Լեզվաբանություն/ Linguistics | 29 | | | | | | 2 | |
| 15. | Հոգեբանություն/ Psychology | 16 | 5 | 25 | | | | | |
| 14. | Մշակութաբանություն / Culturology | | | 29 | | | | | 1 |
| Ընդամենը/ Total | | 354 | 42 | 405 | 55 | 9 | 15 | 2 | 142 |

Դիմորդների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է 40%-ով (2021թ.-ին՝ 731, 2020թ.-ին՝ 687, 2019թ.-ին՝ 611):

Բուհ-դպրոց և բուհ-քոլեջ համագործակցության շրջանակներում Եվրոպական համալսարանի աշխատակազմը շարունակական աշխատանքներ է իրականացնում քոլեջների, ավագ դպրոցների աշակերտների և շրջանավարտների հետ, փորձելով նաև աջակցել նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում:

The number of applicants has increased by 40% compared to the previous year (in 2021 were 731 applicants, in 2020 were 687, in 2019 were 611).

In the framework of the university-school and university-college cooperation, the staff of the European University continuously works with colleges, high school students and alumni, trying to assist them in their professional orientation.

<u>Հանդիպում Հայաստանում եվրոպական քոլեջի ավարտական կուրսի ուսանողների հետ</u>

2022 թվականի փետրվարի 22-ին Հայաստանի Եվրոպական համալսարանը՝ ՀԵՀ ուսումնական գծով պրոռեկտոր Գ. Մանասյանի գլխավորությամբ, հյուրընկալվեց և հանդիպում անցկացրեց նաև Հայաստանում եվրոպական քոլեջի ավարտական կուրսի ուսանողների հետ:

Հանդիպմանը մասնակցեցին նաև ՀԵՀ Կառավարման ամբիոնի վարիչ Ն. Կիրակոսյանը, ՀԵՀ Ճարտարապետության և գրաֆիկ դիզայնի ամբիոնի վարիչ Ս. Ջիլավյանը և Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի դեպարտամենտի պետ Ռ. Մելիքյանը:




<u>A meeting with the graduating students of the European College in Armenia</u>

On February 22, 2022, the European University of Armenia, headed by Gor Manasyan, Vice-Rector on Educational and Scientific affairs at EUA, hosted a meeting with graduate students of the European College in Armenia.

The meeting was also attended by Narine Kirakosyan, Head of the Chair of Management at EUA, Suzanna Jilavyan, Head of the Chair of Architecture and Graphic Design at EUA, Roman Melikyan, Head of Marketing and Public Relations Department at EUA.

Հանդիպում Հայաստանում Ֆրանսիական Քոլեջի և Եվրոպական քոլեջի ավարտական կուրսի ուսանողների հետ

2022 թվականին Հայաստանի եվրոպական համալսարանը՝ ՀԵՀ ուսումնական գծով պրոռեկտոր Գ. Մանասյանի գլխավորությամբ, հյուրընկալվեց և անցկացրեց հանդիպում Հայաստանում ֆրանսական քոլեջի 7 Հայաստանի եվրոպական քոլեջի ավար-տական կուրսի ուսանողների հետ:

Հանդիպմանը մասնակցեցին նաև ՀԵՀ Կառավարման ամբիոնի վարիչ Ն. Կիրակոսյանը, Իրավագիտության ամբիոնի վարիչ Ն. Տոնոյանը և Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի դեպարտամենտի պետ Ռ. Մելիքյանը:




A meeting with the graduating students of the French College in Armenia and the European College in Armenia

On 2022, the European University of Armenia, headed by Gor Manasyan, Vice-Rector on Educational and Scientific affairs at EUA, hosted a meeting with graduate students of the French College in Armenia and the European College in Armenia.

The meeting was also attended by Narine Kirakosyan, Head of the Chair of Management at EUA, Narine Tonoyan, Head of the Chair of Law at EUA, Roman Melikyan, Head of Marketing and Public Relations Department at EUA.

Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի և Երևանի իրավատնտեսագիտական և կառավարման քոլեջի ուսանողների այցը Հայաստանի եվրոպական համալսարան

Բուհ-քոլեջ համագործակցության և մասնագիտական կողմնորոշման շրջանակում՝ Հայաստանի եվրոպական համալսարանի Կառավարման ամբիոնը՝ ի դեմս ամբիոնի վարիչ Ն. Կիրակոսյանի, անցկացրեց «Ինչպե՞ս կառավարել» թեմայով




Students of Yerevan Regional State College No. 1 and Yerevan Juridical-Economic And Managing College visit European University of Armenia

Within the framework of the university-college cooperation and professional orientation, N. Kirakosyan, the Chair of Management of the European University of Armenia, held a lecture-discussion on the topic of "How to manage?" with the students of Yerevan Regional State College No. 1 and

դասախոսություն-քննարկում Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի և Երևանի իրավատնտեսագիտական և կառավարման քոլեջի ուսանողների հետ:

Yerevan Juridical-Economic And Managing College.

<u>Աշակերտների այցը ՀԵՀ</u>

ՀԵՀ-ում հյուրընկալվել էին Երևանի Մանուել Քաջունու անվան թիվ 54 ավագ դպրոցի աշակերտները: Աշակերտները շրջեցին համալսարանում, ծանոթացան բուհում առկա բաժիններին, առաջարկվող մասնագիտություններին, գրադարանին, ընթերցասրահին:



<u>Pupils visit EUA</u>

The Pupils of Yerevan High School No. 54 after Manuel Kajuni were hosted at EUA. The Pupils toured the university, got acquainted with the departments of the university, offered specialties, library, reading room.

***Ընդունելությանը նպաստելու նպատակով Եվրոպական համալսարանը հաշվետու ուսումնական տարում կազմակերպեց նաև Բաց դռների օրեր, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունեցավ Կրթություն և Կարիերա ամենամյա ցուցահանդեսում:***

***In the reporting academic year, in order to promote the admission, the European University of Armenia organized Open Door Days, as well as actively participated in "Education and Career" annual exhibition.***

«Բաց դռների օրեր»,





"Open Doors Days",



ՀԵՀ-ը մասնակցեց «Կրթություն և կարիերա ԷՔՍՊՈ 2022» միջոցառմանը

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում տեղի ունեցավ «Կրթություն և կարիերա ԷՔՍՊՈ 2022» միջոցառումը, որին իր մասնակցությունն ունեցավ նաև Հայաստանի եվրոպական համալսարանը:




EUA participated in the "Education & Career EXPO 2022" event

The "Education-Career EXPO 2022" event took place in Yerevan Regional State College No. 2 after N. Achemyan, in which the European University of Armenia also took part.

---

Հայաստանի եվրոպական համալսարանը՝ «Կրթություն և կարիերա էքսպո 2022» ցուցահանդեսում

Հայաստանի եվրոպական համալսարանն այս տարի նույնպես մասնակցում է ապրիլի 27-ից ապրիլի 29-ը տեղի ունեցող «Կրթություն և կարիերա էքսպո 2022» միջազգային ցուցահանդեսին, որին ներկայացված են հայաստանյան և միջազգային տարբեր կրթական հաստատություններ և կազմակերպություններ:




European University of Armenia at "Education & Career Expo 2022"

The European University of Armenia also participates at the "Education & Career Expo 2022" international exhibition, which takes place from April 27 to April 29, where various Armenian and international educational institutions and organizations are represented.

ՀԵՀ-ը մասնակցեց #GROW աշխատան-քային էքսպոյին

«Երիտասարդները հանուն փոփոխու-թյան» հասարակական կազմակերպու-թյան (Youth for Change NGO) նախա-ձեռնությամբ ս.թ. փետրվարի 18-ին Երևանի «Արմենիա Մարիոթ» հյուրա-նոցում տեղի ունեցավ GROW աշխա-տանքային էքսպոն, որտեղ ակտիվորեն մասնակցեց նաև Հայաստանի եվրոպա-կան համալսարանի պատվիրակությունը՝ ՀԵՀ արտաքին կապերի և միջազգայ-նացման գծով պրոռեկտոր Վ. Սողոմո-նյանի գլխավորությամբ: Էքսպոյի շրջանակներում Համագործակ-ցության հուշագիր ստորագրվեց «Երիտա-սարդությունը հանուն փոփոխության» ՀԿ-ի և Հայաստանի եվրոպական համալսարանի միջև:






EUA participated in GROW WORKING EXPO

The GROW WORKING EXPO was held at the Armenia Marriott Hotel in Yerevan on February 18, 2022 initiated by "Youth for Change NGO" NGO. The EUA delegation headed by Vahram Soghomonyan, EUA Vice-Rector on External Relations and Internationalization, actively participated in the event.

Within the framework of the Expo, a Memorandum of Cooperation was signed between the "Youth for Change" NGO and European University of Armenia.

Հանդիպում «Optimum Partners» ներկայացուցիչների հետ

«Optimum Partners» ընկերության համահիմնադիր և գործադիր տնօրեն Մարկո Գորինին, համահիմնադիր և գլխավոր տնօրեն Էյադ Համմուդենը և կառավարիչ Տագուհի Թումանյանը ս.թ. փետրվարի 16-ին ՀԵՀ-ում հանդիպեցին ՀԵՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների և կիրառական մաթեմատիկայի ամբիոնի ուսանողների հետ:




A Meeting with representatives from "Optimum Partners"

Marco Gorin, Co-founder and CEO at Optimum Partners and Eyad Hammouden, Co-Founder and General Director at Optimum Partners and Manager Taguhi Tumanyan met with the students of the Chair of Information Technologies and Applied Mathematics at EUA on February 16, 2022.

Հանդիպում EPAM Systems ընկերության մասնագետների և մենեջերների թիմի հետ

Հեղինակավոր EPAM Systems ընկերության մասնագետների և մենեջերների թիմը հյուրընկալեր էր Հայաստանի եվրոպական համալսարանի ՏՏ և կիրառական մաթեմատիկայի ամբիոնի ուսանողներին: Հանդիպումը կազմակերպվել էր ՏՏ և կիրառական մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Սուսաննա Հարությունյանի և Տեղեկատվական տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկան Հեղինե Ղումաշյանի կողմից: Հանդիպումը տեղի ունեցավ 2021թ. դեկտեմբերի 21-ին:




Meeting with EPAM Systems team of specialists and managers

The prestigious EPAM Systems company team of specialists and managers were hosted by the students of the EUA Chair of IT and Applied Mathematics. The meeting was organized by Susanna Harutyunyan, Head of the Chair of IT & Applied Mathematics and Heghine Ghumashyan, Dean of the Faculty of Information Technologies. The meeting took place on December 21. 2021.

## ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բուհի գիտահետազոտական գործունեությունը կարգավորվում է համապատասխան օրենսդրությամբ, Բուհի կանոնադրությամբ և ներքին կարգերով:

ՀԵՀ հետբուհական կրթական համակարգում պատրաստվում են բարձրագույն որակավորմամբ կադրեր 4 մասնագիտությունների գծով: Դրանք են.

- Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»,
- Ե.13.02 «Ավտոմատացման համակարգեր»,
- ԺԲ.00.02 «Հանրային իրավունք»,
- Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ»

2021-2022 ուստարում բուհի ասպիրանտուրայում ուսումնառել են 51 ասպիրանտներ և հայցորդներ, այդ թվում՝ 6 օտարերկրացի (տե՛ս գծապատկեր 3):

## SCIENTIFIC ACTIVITY

The research activities of the university are regulated by the relevant legislation, by the University Charter, and by internal regulations. The EUA postgraduate education system is training highly qualified personnel in 4 specialties. They are:

- Ը.00.02 “Economics, Management of Economy and its Spheres”,
- Ե.13.02 “Automation systems”,
- ԺԲ.00.02 “Public law”,
- Ժ.02.07 “Romano Germanic languages”.

In 2021-2022 academic year, 51 PhD students students and applicants, including 6 foreigners, studied in the postgraduate program of the university (see Chart 3).




Գծապատկեր/Chart 3. Հայցորդների և ասպիրանտների թիվը՝ ըստ մասնագիտությունների/ Number of postgraduate students by specialties

Հաշվետու տարում՝

- առկա ուսուցման 3 ասպիրանտներից 2-ը «ԺԲ.00.02 Հանրային կառավարում» մասնագիտությամբ պաշտպանել են գիտական աստիճանի հայցման ատենախոսությունները՝ ստանալով իրավագիտության թեկնածուի աստիճան,
- առկա ուսուցման 1 ասպիրանտ և 6 հայցորդ, որից 2-ը՝ արտերկրյա սովորողներ, ավարտել են ուսումնառությունը բուհում և պատրաստվում են գիտական ատենախոության պաշտպանության:

ՀԵՀ-ում իրենց ուսումնառություն են անցնում նաև 3 դոկտորանտ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

2018թ. ՀՀ գիտության կոմիտեի կողմից կազմակերպված երիտասարդ գիտնականների գիտական ծրագրի շրջանակներում հավանության արժանացած Եվրոպական համալսարանի կառավարման ամբիոնի դասախոս Արամ Մխիթարյանի ներկայացրած «ՀՀ ագրարային ոլորտի ֆինանսավորման հիմնախնդիրները և լուծման ուղիները ժամանակակից ֆինանսական գործիքների և մեխանիզմների կիրառման միջոցով» ծրագրի 2-րդ փուլը կշարունակվի հաշվետու տարում: Ծրագիրը իրականացվում է ՀԵՀ Կառավարման ամբիոնի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: Ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում և քննարկվում են ՀԵՀ գիտական խորհրդում:

In a reporting year՝

- 2 PhD students of 3 defended their dissertations in the profession of "ԺԲ.00.02 Public Administration", receiving the degree of Candidate of Law.
- 1 PhD students and 6 applicants, 2 of whom are foreign students, have completed their studies at the University and are going to defend their scientific dissertation.

3 doctoral students are also studying at EUA, majoring in Ը.00.02 "Economics and Management of the Economy and its Sectors".

In 2018 the second phase of "Problems of financing the RA agricultural sector and solution ways through the use of modern financial tools and mechanisms" program which was presented by Aram Mkhitaryan, a lecturer at the Chair of Management of European University of Armenia, was approved by the RA Committee of Science in 2018 and will be continued in the reporting year. The program is implemented with the participation of lecturers and students of the Faculty of Economics and Management of EUA. Project implementation reports are regularly submitted and discussed at the EUA Scientific Council.

Twice a year, EUA Scientific Council guarantees the publication of the "European University" collection of scientific articles which is in the list of journals accepted by the Supreme Certifying Committee.

In the reporting year, 2 collections of scientific articles was published: N12(02) and N13(01), which accordingly includes about

Տարեկան երկու անգամ ՀԵՀ գիտական խորհրդի կողմից երաշխավորվում և հրատարակվում է «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածուն, որը ներառված է ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականների ցանկում:

Հաշվետու տարում հրատարակվել է 2 գիտական հոդվածների ժողովածու՝ N12(02) և N13(01), որոնց մեջ համապատասխանաբար տեղ են գտել թվով 21 և 27 գիտական հոդվածներ՝ տնտեսագիտության, կառավարման, իրավագիտության, լեզվաբանության, հոգեբանության, մանկավարժության, քաղաքագիտության, պատմության, ինֆորմատիկայի և այլ ոլորտներում:

Յուրօրինակությունը ստուգելու էլեկտրոնային համակարգի և փակ գրախոսության գործիքների կիրառման շնորհիվ ապահովվում է ժողովածուի բարձր մակարդակը և հեղինակությունը:

Թեպետ 2021-2022թթ ուսումնական տարին լի էր փորձություններով, այնուամենայնիվ ՀԵՀ պրոֆեսորադասախոսական կազմն իրականացրել է հետազոտություններ, որոնց արդյունքներն արտացոլված են մի շարք գիտական հոդվածներում (այդ թվում՝ միջազգային գիտական հանդեսներում), հրատարակվել են մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, որոնք կիրառվում են ի նպաստ արդյունավետ ուսումնառության (տե՛ս աղյուսակ 4.):

21 and 27 scientific articles from economics, management, law, linguistics, psychology, pedagogy, political science, history, informatics and other fields.

The high level and reputation of the Collection of scientific articles is ensured due to the checking of the originality by using electronic review system and closed review tools.

Though academic year 2021-2022 was full of trials, EUA academic staff conducted research the results of which are reflected in a number of scientific articles (including international scientific journals), monographs and teaching and methodological manuals have been published that are used for the benefit of productive learning (see chart 4.).

## Աղյուսակ/Chart 4. 2021-2022 ուստարվա ընթացքում ՀԵՀ ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեության արդյունքները/ The results of the research activities of the EUA academic staff within 2021-2022 academic year

| | Կառավար-ման ամբիոն/ Chair of Management | Տնտեսա-գիտության և ֆինանսների ամբիոն/Chair of Economics and Finance | Հոգեբանու-թյան ամ-բիոն/ Chair of Psychology | Կիրառական լեզվաբանու-թյան ամ-բիոն/ Chair of Applied Linguistics | Միկրոէլեկ-տրոնային սխեմաների ու համա-կարգերի ամ-բիոն/ Chair of Microelec-tronic Circuits and Systems | Ճարտարա-պետության ու Դիզայնի ամբիոն/ Chair of Architecture and Design | Միջազգային հարաբե-րությունների ամբիոն/ Chair of International Relations | ՏՏ և կիրառական մաթեմա-տիկայի ամբիոն/ Chair of IT and Applied Mathematics | Տուրիզմի ու Սերվիսի ամբիոն/ Chair of Tourism and Service | Իրավա-գիտության ամբիոն/ Chair of Law | Ընդամենը/ Total |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գիտական հոդ-վածներ հայաս-տանյան հանդես-ներում/ Scientific articles in the Armenian journals | 22 | 14 | 14 | 10 | 7 | 15 | 5 | 4 | 8 | 12 | 111 |
| Գիտական հոդ-վածներ միջազ-գային հանդես-ներում/ Scientific articles in the international journals | 14 | 6 | 8 | 2 | 10 | 9 | 5 | 3 | 1 | 2 | 60 |
| Գիտական զե-կույցներ Հայաս-տանում տեղի ունեցած կոնֆե-րանսների կամ այլ գիտական միջոցառումների ընթացքում / Scientific reports in conferences or other scientific events in the RA | 2 | 2 | 12 | 3 | 5 | 4 | 5 | 3 | 2 | 4 | 42 |
| Գիտական զե-կույցներ միջազ-գային կոնֆե-րանսներում կամ այլ գիտական միջոցառումներում/ Scientific reports in international conferences or other scientific events | 5 | 2 | 9 | 1 | 12 | 13 | 4 | 0 | 0 | 0 | 46 |
| Մասնագիտական վերապատրաստումներ / Professional trainings | 13 | 1 | 14 | 10 | 15 | 13 | 5 | 3 | 5 | 0 | 79 |
| Մեթոդական վե-րապատրաստումներ/Methodological trainings | 6 | 2 | 8 | 12 | 0 | 3 | 3 | 1 | 6 | 0 | 41 |
| ՀԵՀ-ում իրակա-նացվող վերա-պատրաստումներ / Trainings conducted at EUA | 15 | 0 | 10 | 2 | 1 | 3 | 3 | 0 | 6 | 0 | 40 |
| Մենագրություն-ներ հրատարակ-ված ՀՀ-ում/ Monographs published in the RA | 5 | 1 | 0 | 1 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 1 | 9 |
| Մենագրություն-ներ հրատարակ-ված արտասահ-մանում/ Monographs published abroad | 4 | 1 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 6 |
| Ուսումնամեթո-դական ձեռնարկ-ներ/ Teaching and methodlogical manuals | 1 | 0 | 0 | 1 | 4 | 1 | 1 | 0 | 0 | 1 | 9 |

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԵՀ պրոֆեսորա-դասախոսական կազմի կողմից հրատարակվել է 171 գիտական հոդվածներ, որոնց մոտ 35%-ը՝ միջազգային հեղինակավոր գիտական հանդեսներում: Գիտական հոդվածների մեծ մասը բաժին է ընկնում Կառավարման, Գրաֆիկական դիզայնի և Հոգեբանության ամբիոնների դասախոսներին, իսկ միջազգային հանդեսներում հրատարակված գիտական հոդվածների քանակով առաջատար են Կառավարման և Միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի ամբիոնների դասախոսները:

2021-2022 ուստարում գիտական միջոցառումներին և կոնֆերանսներին ՀԵՀ ՊԴ կազմի ներկայացուցիչները ներկայացրել են 88 զեկույց, որի մոտ 52%-ը միջազգային կոնֆերանսներում: Կոնֆերանսներում ակտիվ մասնակցություն են ունեցել հիմնականում Հոգեբանության, Միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի, Գրաֆիկական դիզայնի ամբիոնների դասախոսները, միջազգային կոնֆերանսներում զեկույցների թվով առանձնանում են Միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի, Գրաֆիկական դիզայնի ամբիոնների դասախոսները:

ՀԵՀ ՊԴ կազմից մոտ 160 դասախոս 2021-2022 ուստարվա ընթացքում առնվազն մեկ անգամ մասնակցել է վերապատրաստումների, որի 49%-ը՝ մասնագիտական, 26%-ը՝ մեթոդական: Մեթոդական վերապատրաստումների 25%-ից ավելին կազմակերպված է եղել Եվրոպական համալսարանի կողմից:

In a reporting year EUA academic staff published 171 scientific articles about 35% of which in prestigious international scientific journals. Most of the scientific articles belong to the lecturers of the Chairs of Management, Graphic Design and Psychology. The lecturers of the Chair of Management and Chair of Microelectronic Circuits and Systems are the leading publishers in international journals.

In 2021-2022 academic year the representatives of the EUA academic staff presented 88 reports at scientific events and conferences about 52% of which in international conferences. The lecturers, taking an active participation in the conferences, were mainly from Chairs of Psychology, Microelectronic Circuits and Systems and Graphic Design. The lecturers of the Chairs of Microelectronic Circuits and Systems and Graphic Design stand out in the number of reports in the international conferences.

Within 2021-2022 academic yeat 160 lecturers from EUA academic staff participated in trainings. 49% lecturers took part in professional trainings, 26% - methodological. More than 25% of the methodological trainings were organized by the European University of Armenia.

During the reporting period, 15 monographs were published by EUA faculty members, 6 of which were published abroad and 9 educational manuals. About 42% of the published monographs and educational manuals belong to the lecturers of the Management Chair.

In the 2021-2022 academic year, H. Ghumashyan, lecturer of

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԵՀ ՊԴ կազմի կողմից հրատարակվել է 15 մենագրություն, որոնցից 6-ը՝ արտասահմանում և 9 ուսումնամեթոդական ձեռնարկ: Հրատարակված մենագրությունների և ուսումնամեթոդական ձեռնարկների մոտ 42%-ը բաժին է ընկնում Կառավարման ամբիոնի դասախոսներին:

2021-2022 ուսումնական տարում ՀԵՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների և կիրառական մաթեմատիկայի ամբիոնի դասախոս Հ. Ղումաշյանը, ինչպես նաև Գրաֆիկական դիզայնի ամբիոնի դասախոս Լիլիթ Բաբայանը գիտական հոդվածներ են հրապարակել Scopus/Web of Science գրանցված գիտական հարթակներում:

the Chair of EUA Information Technologies and Applied Mathematics, as well as Lilit Babayan, lecturer of the Chair of Graphic Design, have published scientific articles on Scopus/Web of Science registered scientific platforms.

2021 թվականի հոկտեմբերի 26-28-ը ՀԵՀ Կիրառական լեզվաբանության ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ. Սոնա Հակոբյանը, ամբիոնի դասախոսներ՝ բ.գ.թ. Լուսինե Սարգսյանը, բ.գ.թ. Աննա Կարապետյանը, Նատալյա Զաքարյանը, Մարկուհի Ոսկանյանը և ամբիոնի հայցորդ, դասախոս, PEARSON պաշտոնական ներկայացուցիչ Լիզա Մարաբյանը մասնակցեցին Ժամանակակից Լեզուների Եվրոպական Կենտրոնի (ECML) եռօրյա աշխատաժողով- վերապատրաստմանը՝ "Լեզուների համաեվրոպական համա-կարգի լեզվական մակարդակների




On October 26-28, 2021 Sona Hakobyan, PhD, Head of the Chair of Applied Linguistics, lecturers of the Chair, Lusine Sargsyan (PhD), Anna Karapetyan (PhD), Natalya Zakaryan, Markuhi Voskanyan and the applicant, lecturer, Official Representative of PEARSON Lisa Marabyan participated in a three-day workshop-training entitled "***Combining the Language Levels of the Pan-European Language System with the Development of Multilingual and Multicultural Skills***".

| | | |
|---|---|---|
| զուգակցումը բազմալեզվական և բազմամշակութային հմտությունների ձևավորմանը" թեմայով: | | |
| ՀԵՀ աշխատակիցները մասնակցեցին ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի (ECML) կողմից կազմակերպված վերապատրաստմանը<br>2021թ. նոյեմբերի 11-12 ՀԵՀ Pearson-ի և լեզուների թեստավորման և վերապատրաստման դեպարտամենտի համագործակցության շրջանակներում դեպարտամենտի ղեկավար, կիրառական լեզվաբանության ամբիոնի վարիչ Ս. Հակոբյանը, Որակի ապահովման դեպարտամենտի ղեկավար Կ. Սարգսյանը, Միջազգային համագործակցության դեպարտամենտի ղեկավար Գ. Ավետիսյանը մասնակցեցին «Language of Schooling in Subject Learning» խորագրով ECML երկօրյա վերապատրաստմանը և ստացան միջազգային հավաստագրեր: | <br> | EUA academic staff representatives participated in the training organized by the European Center for Modern Languages (ECML)<br>On November 11-12, 2021, within the framework of cooperation between EUA Pearson Language Testing and Training Department, S. Hakobyan, Head of Department and Head of the Chair of Applied Linguistics, K. Sargsyan, Head of Quality Assurance Department, G. Avetisyan, Head of International Cooperation Department, participated in a two-day ECML training entitled "Language of Schooling in Subject Learning".<br>At the end of this event the participants received international certificates from the "European Center for Modern Languages" in Graz, Austria. |

ՀԵՀ Գրաֆիկ դիզայնի ամբիոնի դասախոս Մեսրոպ Անդրիասյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն հեղինակավոր Politecnico di Milano-ում

Հայաստանի եվրոպական համալսարանի ճարտարապետության և գրաֆիկ դիզայնի ամբիոնի դասախոս Մեսրոպ Անդրիասյանն Իտալիայի Միլանի պոլիտեխնիկի ճարտարապետության, շինարարական միջավայրի և շինարարական ճարտարագիտության դեպարտամենտում (Politecnico di Milano – Department of Architecture, Built Environment and Construction Engineering (DABC)) պաշտպանել է «Ալգորիթմական հումանիտար ճարտարապետություն. Արտակարգ իրավիճակների կարգավորման և ապաստարանների պլանավորման գործիքների և մեթոդների առաջխաղացում» («Algorithmic Humanitarian Architecture. Advancement in tools and methods for emergency settlement and shelter planning») թեմայով թեկնածուական ատենախոսությունը և ստացել ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան։




Mesrop Andriasyan, Lecturer at the Chair of Architecture & Graphic Design of EUA, defended his doctoral dissertation at the prestigious Politecnico di Milano

Mesrop Andriasyan, a lecturer at the Chair of Architecture & Graphic Design of the European University of Armenia, has defended his doctoral dissertation on “Algorithmic Humanitarian Architecture: Advancement in tools and methods for emergency settlement and shelter planning” at the Department of Architecture, Built Environment and Construction Engineering (DABC) of the Politecnico di Milano and has become a PhD in Architecture.

Անգլերենի լեզվամակարդակը հաստատող Փիրսոնի միջազգային հավաստագրերի շնորհում ՀԵՀ-ում

2022 թվականի մայիսի 11-ին Հայաստանի եվրոպական համալսարանի գիտական խորհրդի թիվ 36 նիստին ամփոփվեցին և Անգլերենի լեզվամակարդակը հաստատող Փիրսոնի միջազգային հավաստագրեր շնորհվեցին մի շարք դասախոսների, ամբիոնի վարիչների, ինչպես նաև Բիզնեսի միջազգային դպրոցի տնօրենին, որոնք կարողացել էին հանձնել պահանջվող քննությունը և ստանալ անհրաժեշտ միավորները:




Awarding of International Pearson Certificates at EUA confirming the level of English

On May 11, 2022, at the 36th session of the Academic Council of the European University of Armenia, the results were summed up and Pearson International Certificates confirming the Level of English were awarded to a number of Lecturers, Heads of the Chairs, as well as the Director of the International Business School, who were able to pass the required exam and get the necessary points.

---

We conducted the audit in accordance with International Auditing Standards (IAS). Our responsibilities under those standards are further described in the “Auditor’s responsibilities for the audit of the consolidated financial statements” section of our report. We are independent of the Foundation in accordance with the Code of Ethics for Professional Accountants published by the International Ethical Standards Board for Accountants (the IESB Code) and have complied with other ethical requirements in accordance with the IESB Rules. We believe that the audit evidence we have obtained is sufficient and appropriate to provide a basis for our opinion.

Responsibility of management and control circles for financial statements

Management is responsible for the preparation and fair presentation of financial statements in accordance with International Financial Reporting Standards for Small and Medium-sized Entities, and for such internal control as management determines is necessary to ensure the preparation of financial statements that are free from material misstatement, whether due to fraud or error.

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք



In preparing the financial statements, management is responsible for assessing the Foundation ability to continue as a going concern, disclosing, as applicable, matters related to going concern and using the going concern basis of accounting unless the management either intend to liquidate the Foundation or to cease operations, or has no realistic alternative but to do so.

Those in management are responsible for overseeing the Foundation`s financial reporting process.

Auditor's responsibilities for the audit of the consolidated financial statements

Our objectives are to obtain reasonable assurance about whether the consolidated financial statements as a whole are free from material misstatement, whether due to fraud or error, and to issue an auditor's report that includes our opinion.

Reasonable assurance is a high level of assurance, but is not a guarantee that an audit conducted in accordance with prevailing International Auditing Standards will always detect a material misstatement when it exists. Misstatements can arise from fraud or error and are considered material if, individually or in the aggregate, they could reasonably be expected to influence the economic decisions of users taken on the basis of these consolidated financial statements.

As part of an audit in accordance with IASs, we exercise professional judgement and maintain professional skepticism throughout the audit. We also:

- Identify and assess the risks of material misstatement of the consolidated financial statements, whether due to fraud or error, design and perform audit procedures responsive to those risks, and obtain audit evidence that is sufficient and appropriate to provide a basis for our opinion. The risk of not detecting a material misstatement resulting from fraud is higher than for one resulting from error, as fraud may involve collusion, forgery, intentional omissions, misrepresentations, or the override of internal control.
- Obtain an understanding of internal control relevant to the audit in order to design audit procedures that are appropriate in the circumstances, but not for the purpose of expressing an opinion on the effectiveness of the Foundation's internal control.
- Evaluate the appropriateness of accounting policies used and the reasonableness of accounting estimates and related disclosures made by management.

բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա։ Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը։ Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա։ Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը։

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին։

**Հաստատված է**
«Ջի ընդ Քո. Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն/աուդիտոր Լ.Պողոսյան

Երևան
28 հունիսի 2022թ.



- Conclude on the appropriateness of the directors' use of the going concern basis of accounting and, based on the audit evidence obtained, whether a material uncertainty exists related to events or conditions that may cast significant doubt on the Foundation's ability to continue as a going concern. If we conclude that a material uncertainty exists, we are required to draw attention in our auditor's report to the related disclosures in the consolidated financial statements or, if such disclosures are inadequate, to modify our opinion. Our conclusions are based on the audit evidence obtained up to the date of our auditor's report. However, future events or conditions may cause the Foundation to cease to continue as a going concern

- Evaluate the overall presentation, structure and content of the consolidated financial statements, including the disclosures, and whether the consolidated financial statements represent the underlying transactions and events in a manner that achieves fair presentation.

We communicate with the audit, risk and compliance committee of the foundation regarding, among other matters, the planned scope and timing of the audit and significant audit findings, including any significant deficiencies in internal control that we identify during our audit.

Approved by:
"G and CO" Audit Group LTD
Director/Auditor L.Poghosyan
Yerevan
June 28, 2022

## *ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/ OTHER EDUCATIONAL ACTIVITIES*

Ուսումնաճանաչողական տուր Արագածոտնի մարզ

2022 թվականի հուլիսի 5-ին ՀԵՀ-ի Ճարտարապետության և դիզայնի ամբիոնն իրականացրեց ծրագրով նախատեսված հերթական չափագրության և հետազոտական տուր՝ Ոսկեվազ գինու գործարան - Սուրբ Հովհաննես եկեղեցի - Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում գտնվող Հայոց այբուբենին նվիրված խաչքարեր - Սուրբ Սիոն եկեղեցի - Օշականի ձոր հանգստյան գոտի երթուղով:




An educational and cognitive tour to Aragatsotn region

On July 5, 2022, the Chair of Architecture and Design of the European University of Armenia carried out another survey and research tour planned by the program of the following directions: Voskevaz Winery - St. Hovhannes Church - St. Mesrop Mashtots Church in Oshakan - Cross stones dedicated to the Armenian alphabet in the courtyard of St. Mesrop Mashtots Church - St. Sion Church - Oshakan Valley recreation area.

Ուսումնաճանաչողական տուր Գեղարքունիքի և Տավուշի մարզեր

2022 թվականի հունիսի 25ին ՀԵՀ-ի Զբոսաշրջության և սպասարկման ամբիոնն իրակացրեց ծրագրով նախատեսված հերթական տուրը Սևանավանք Հաղարծին Թաքնված ջրվեժ Գոշավանք երթուղով:




An educational and cognitive tour to Gegharkunik and Tavush regions

On June 25, 2022, the Chair of Tourism and Service of the European University of Armenia carried out another planned tour along the route Sevanavank - Hahartsin - Hidden Waterfall-Goshavank.

ՀԵՀ-ն մասնակցեց «Միջազգային անվտանգություն և հակամարտություն-ների կարգավորում» վերնագրով միջազ-գային սեմինարին

ՀԵՀ Միջազգային հարաբերություն-ների ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Մ. Եսոյանը և Հայաստանի եվրոպական համալսարանի Մարքեթինգի և հասարա-կայնության հետ կապերի դեպարտա-մենտի պետ, ք.գ.թ., դոցենտ Ռ. Մելիքյանն մասնակցեցին Հայ-Ռուսական համալսա-րանում անցկացվող «Միջազգային անվտանգություն և հակամարտություն-ների կարգավորում» վերնագրով միջազ-գային սեմինարին:




EUA participated in the International workshop on "International Security and Conflict Resolution"

Myasnik Yesoyan, Head of the Chair of International Relations of the European University of Armenia, PhD, Associate Professor and Roman Melikyan, Head of Marketing and Public Relations Department of the European University of Armenia, PhD, Associate Professor, participated in the International workshop on "International Security and Conflict Resolution" held at the Russian-Armenian University.

ՀԵՀ ուսանողները մասնակցում են «Եվրասիա Գլոբալ» միջազգային երիտա-սարդական ֆորումին

ՀԵՀ ուսանողները Հայաստանի պատվիրակության կազմում մասնակցեցին ՌԴ Օրենբուրգ քաղաքում անցկացված «Եվրասիա Գլոբալ» միջազգային երիտասարդական ֆորումին:




EUA students participate in the International Youth Forum Eurasia Global

EUA students participate in the Eurasia Global International Youth Forum. They are members of the Armenian delegation who will present Armenian culture at the International Youth Forum.

Հանդիպում Նոբելյան մրցանակակիր Արտեմ Փաթափությանի հետ

2022 թվականի հունիսի 13-17-ը Երևանում անցկացվող Գիտության և բիզնեսի օրերի շրջանակում Երևանում գտնվող Նոբելյան մրցանակակիր, գիտնական Արտեմ Փաթափությանը այցելել է «Սինոփսիս Արմենիա» ընկերություն և հանդիպել գիտական հանրության ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա են եղել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը, «Սինոփսիս Արմենիայի» նախագահ Երվանդ Զորյանը, «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Հովիկ Մուսայելյանը, Հայաստանի եվրոպական համալսարանի ռեկտոր Հեղինե Բիշարյանը, Հայաստանի եվրոպական համալսարանի վարչաֆինանսական տնօրեն Աշոտ Թորոսյանը, նախարարությունների, ուսումնական հաստատությունների և ՏՏ ոլորտի կազմակերպությունների ներկայացուցիչներ:



A Meeting with Nobel Laureate Artem Pataputyan

The Nobel Laureate Artem Pataputyan visited Synopsys Armenia within the framework of the Science-Business Days in Yerevan on June 13-17, 2022, and met with representatives of the scientific community. Vahagn Khachaturyan (RA President), Karen Trchunyan (RA Deputy Minister of Education, Science, Culture and Sport), Yervand Zoryan (President of Synopsys Armenia), Hovik Musayelyan (Director of Synopsys Armenia CJSC), Heghine Bisharyan (Rector of the European University of Armenia), Ashot Torosyan (Director of Finance and Administration of the European University of Armenia) and representatives of ministries, educational institutions, IT organizations were present at the meeting.

**ՀԵՀ «Ռոբոտաշինություն և խելացի համակարգեր» ամբիոնի ուսանողները մասնակցեցին ՈՄԱ-ի ուսումնամարզական դասընթացներին**

Ինստիգեյթ ընկերության հետ համատեղ ստեղծած Հայաստանի եվրոպական համալսարանի «Ռոբոտաշինություն և խելացի համակարգեր» ամբիոնի ուսանողները ֆիզիկական պատրաստության դասընթացների համատեքստում և զորակոչին ընդառաջ՝ մասնակցեցին 10-օրյա ՈՄԱ ուսումնամարզական հավաքներին:



**The EUA Students of the Chair of "Robotics and Intelligent Systems" participated in VOMA Training Courses**

The Students of the Chair of "Robotics and Intelligent Systems" of the European University of Armenia, established jointly with Instigate company, participated in a 10-day VOMA training camp ahead of conscription in the context of physical training. It became very possible thanks to the mutual support of EUA and Instigate company.

**Դեռահասության՝ որպես բարդ հոգեբանական տարիքի առանձնահատկությունները» թեմայով բաց-դաս ՀԵՀ-ում**

ՀԵՀ-ում տեղի ունեցավ «Դեռահասության՝ որպես բարդ հոգեբանական տարիքի առանձնահատկությունները» թեմայով բաց-դաս, որը կազմակերպել էին ՀԵՀ Հոգեբանության 1-ին կուրսի ուսանողներն դասախոս Ն. Հարությունյանի հետ:



**An open-lesson on "Peculiarities of adolescence as a complex psychological age" at EUA**

An open-lesson on "Peculiarities of adolescence as a complex psychological age" was held at EUA organized by EUA 1st year Psychology students with the lecturer N. Harutyunyan.

«Երևան քաղաքի կենսագրությունը» թեմայով դասախոսություն Մարկ Գրիգորյանի հետ

ՀԵՀ Դիզայնի ամբիոնի կազմակերպմամբ՝ կայացավ «Երևան քաղաքի կենսագրությունը» թեմայով դասախոսություն կարդաց լրագրող, գրող, Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի տնօրեն Մարկ Գրիգորյանի հետ: Մարկ Գրիգորյանը «Երևան քաղաքի կենսագրությունը» թեմայի շրջանակներում բացահայտեց ծանոթ Երևանը նորովի՝ ներկայացնելով մի քաղաք, որը դուրս է տուրիստական ուղեցույցների և պատմական աշխատությունների շրջանակից:




A Lecture with Mark Grigorian on "Biography of Yerevan city"

At the European University of Armenia there was a lecture on "Biography of the city of Yerevan" with Mark Grigorian, Journalist, Writer, Director at the National Museum-Institute of Architecture named after Alexander Tamanyan organized by the Chair of Design at EUA. Mark Grigorian rediscovered the familiar Yerevan in a new way within the framework of the "Biography of Yerevan city", presenting a city that is beyond the scope of tourist guides and historical works.

ՀԵՀ-ն մասնակցեց Վլադիմիր Եղիազարյանի անվան ծրագրավորման հայաստանյան բաց մրցույթ 2022-ին

ՀԵՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների և կիրառական մաթեմատիկայի ամբինի ուսանողները մասնակցեցին 2022 թվականի մայիսի 22-ին Հայ-Ռուսական համալսարանում կայացած Վլադիմիր Եղիազարյանի անվան ծրագրավորման հայաստանյան բաց մրցույթ 2022-ին: Այն կազմակերպվել էր Հայ-Ռուսական համալսարանի, CodeSignal և OneMarketData ընկերությունների, ինչպես նաև Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի (EIF) կողմից:




EUA participated in the Armenian Open Programming Competition after Vladimir Yeghiazaryan 2022

The students of the Chair of Information Technologies and Applied Mathematics of the European University of Armenia participated in the Armenian Open Programming Competition after Vladimir Yeghiazaryan 2022 held at the Russian-Armenian University on May 22, 2022. It was organized by the Armenian-Russian University, CodeSignal and OneMarketData companies, as well as the Enterprise Incubator Foundation (EIF).

«Դեպրեսիան բոլոր տարիքներում» թեմայով աշխատարան ՀԵՀ-ում

ՀԵՀ «Հոգեբանություն» մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսի ուսանողները ՀԵՀ-ում կազմակերպեցին «Դեպրեսիան բոլոր տարիքներում» թեմայով աշխատարան:




A workshop on "Depression across all age groups" at EUA

A workshop entitled "Depression across all age groups" was held by the first and second-year students of the Specialty of Psychology on May 12 at the European University of Armenia.

---

«Միջուկային հոգեբանություն» թեմայով երկու աշխատարան ՀԵՀ-ում

Հայաստանի եվրոպական համալսարանում կայացան երկու աշխատարաններ «Միջուկային հոգեբանություն» թեմայով:

Աշխատարանը վարեց Բելգիայից հրավիրված հոգեթերապևտ, հոգեվերլուծաբան Իզաբելլ Բարսամիանը:




Two workshops on "Nuclear Psychology" at EUA

There were held two workshops on "Nuclear Psychology" at EUA. The workshop was conducted by Isabelle Barsamian, a psychotherapist and psychoanalyst, invited from Belgium.

«Learning by Sharing» խորագրով միջբուհական միջոցառում ՀԵՀ-ում

2022 թվականի մայիսի 19-ին Հայաստանի եվրոպական համալսարանի Կիրառական լեզվաբանության ամբիոնը Երևանի պետական համալսարանի Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հետ համատեղ կազմակերպեց միջբուհական միջոցառում՝ «Learning by Sharing» խորագրով:

Միջոցառմանը մասնակցեցին ՀԵՀ «Լեզվաբանություն», «Կառավարում» մասնագիտությունների 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողները և ԵՊՀ ուսանողները:



Interuniversity event “Learning by Sharing” at EUA

On May 19, 2022, the Chair of Applied Linguistics of European University of Armenia in cooperation with the Translation Studies Department of Yerevan State University organized an interuniversity event entitled “Learning by Sharing”.

The event was attended by the EUA second and third-year students of the Specialties of Linguistics and Management and the YSU students.

Բաց դասախոսություններ արտերկրյա հրավիրյալ դասախոս Աուդրա Սավիկիենի հետ ՀԵՀ-ում

«Էրազմուս+» ծրագրի շրջանակներում 2022 թվականի մայիսի 18-ին և 19-ին ՀԵՀ-ում «Ինչպե՞ս են մետավերսիան և VR տեխնոլոգիան փոխել մեր կյանքը» և «Ծանոթություն Լիտվայի արդյունաբերության միտումներին. Իրադարձություններ մետատարբերակում. գովազդ, թե՞ իրականություն» թեմաներով բաց դասախոսություններով հանդես եկավ Վիլնյուսի համալսարանի դասախոս, VR էնտուզիաստ, կենդանի և թվային իրադարձությունների պրոդյուսեր Աուդրա Սավիկիենը:



Open lectures with foreign guest lecturer Audra Savickiene at EUA

Within the framework of "Erasmus +" program, Audra Savickiene, a Lecturer at Vilnius University, VR Enthusiast, Live & Digital Events Producer, conducted open lectures on "How will the metaverse and VR Technology change our Lives?” & “Meeting Industry trends in Lithuania. Events in Metaverse: hype or reality?” on May 18 and 19, 2022, at the European University of Armenia.

<u>«Թանգարան, ազգային կրթություն և հայի ինքնության տաճար» թեմայով վարպետաց դաս ճարտարապետ Ռուզան Կուրթանջյանի հետ</u>

Հայաստանի եվրոպական համալսարանի Նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ «Թանգարան, ազգային կրթություն և հայի ինքնության տաճար» թեմայով վարպետաց դասը, որը անցկացրեց Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի ճարտարապետ, ավագ գիտաշխատող Ռուզան Կուրթանջյանը:



<u>A master class on "Museum, national Education and shrine of Armenian Identity" with Architect Ruzan Kurtanjyan</u>

A master class on "Museum, National Education and shrine of Armenian Identity" with Ruzan Kurtanjyan, Architect and Senior Researcher of the National Museum-Institute of Architecture after Alexander Tamanyan took place in the Great Conference Hall of the European University of Armenia.

<u>Հաջող մասնակցություն՝ ALL4R&D նախագծի շրջանակում անցկացված դասընթացներին</u>

ՃՇՀԱՀ-ում կայացավ Էրազմուս+ ծրագրի ALL4R&D նախագծի շրջանակում ՀԵՀ 14 ուսանողներ մասնակցեցին դասընթացների և ստացան մասնակցության և ավարտական վկայականներ:



<u>Successful participation in ALL4R & D project trainings</u>

Within the scope of All4R&D Erasmus+ Project 14 students from the European University of Armenia were granted certificates of participation at the meeting held the National University of Architecture and Construction of Armenia.

2022 թվականի ապրիլի 1-ին ՀԵՀ Հոգեբանության ամբիոնի վարիչ Մարի Քելոյանը «Հոգեբանություն» մասնագիտության 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողների հետ այցելեցին «Հերոսների վերականգնողական քաղաք» կենտրոն:

«Հերոսների վերականգնողական քաղաք» կենտրոնը ուսանողների համար կազմակերպեց «Հոգեթերապևտիկ ժամանակակից մեթոդները» թեմայով գիտագործնական սեմինար:



On April 1, 2022, Marie Keloyan, Head of the Chair of Psychology at EUA, together with 2nd և 3rd year bachelor degree students in "Psychology" major at EUA visited the "Rehabilitation City of Heroes" Center.

The "Rehabilitation City of Heroes" Center organized a Scientific-Practical Seminar on "Modern Psychotherapeutic Methods".

«Զբոսաշրջության ոլորտի զարգացման հեռանկարները» թեմայով բաց դասախոսություն ՀԵՀ-ում

2022 թվականի մարտի 29-ին Հայաստանի եվրոպական համալսարանում հյուրընկալվել էր «Պրոֆեսիոնալ զբոսավարների հայկական ասոցիացիայի» նախագահ Յաշա Սոլոմոնյանը, ով հանդես եկավ «Զբոսաշրջության ոլորտի զարգացման հեռանկարները» թեմայով բաց դասախոսությամբ:



An open lecture on "Prospects for the development of the tourism sector" at EUA

On March 29, 2022, the European University of Armenia hosted Yasha Solomonyan, President of the Armenian Association of Professional Tourist Guides, who had an open lecture on "Prospects for the Development of the Tourism Sector".

Կայացավ նորաստեղծ «Երիտասարդ կառավարիչներ» ուսանողական ակումբի առաջին կլոր սեղան-քննարկումը

2022 թվականի մարտի 29-ին Հայաստանի եվրոպական համալսարանում կայացավ ՀԵՀ Կառավարման ամբիոնին կից գործող «Գիտահետազոտական լաբորատորիայի» հենքի վրա ստեղծված «Երիտասարդ կառավարիչներ» ուսանողական ակումբի կողմից կազմակերպված «Ռուս-Ուկրաինական հակամարտության ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա» թեմայով կլոր սեղան-քննարկումը:



The first roundtable discussion of the newly established "Young Managers" Student Club took place

The "Young Managers" Club Student established on the basis of the "Research laboratory" attached to the Chair of Management at EUA organized a roundtable discussion on "Impact of the Russian-Ukrainian conflict on the Armenian economy" was held at the European University of Armenia on March 29, 2022.

«Կրթական միջավայրը և անձի հոգեբանական հասունացումը» թեմայով սեմինար-քննարկում ՀԵՀ-ում

2022 թվականի մարտի 18-ին Հայաստանի եվրոպական համալսարանում տեղի ունեցավ «Կրթական միջավայրը և անձի հոգեբանական հասունացումը» թեմայով սեմինար-քննարկում, որն անցկացրեց հոգեբան, հ.գ.թ., դոցենտ Կարինե Նալչաջյանը:




The Seminar-discussion on "Educational environment - psychological maturation of a person" in EUA

On March 18, 2022, the European University of Armenia hosted a seminar-discussion on "Educational environment - psychological maturation of a person" conducted by Karine Nalchajyan, conducted by Karine Nalchajyan, psychologist, candidate of psychological sciences, associate professor.

ՀԵՀ-ի ուսանողները մասնակցեցին «Ժամանակակից աշխարհաքաղաքականության նորարարական մեթոդները» թեմայով վարպետության դասին ՀՌՏԱ-ում

Հայաստանի եվրոպական համալսարանի «Միջազգային հարաբերություններ» մասնագիտության ուսանողները՝ ՀԵՀ Միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ Մյասնիկ Եսոյանի և ՀԵՀ Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի դեպարտամենտի պետ Ռոման Մելիքյանի գլխավորությամբ, մասնակցեցին 2022 թվականի մարտի 11-ին Հայաստանում ռուսական տարածաշրջանային ակադեմիայում կայացած «Ժամանակակից աշխարհաքաղաքականության նորարարական մեթոդները» թեմայով վարպետության դասին:




The EUA students participated in the Master Class on "Innovative methods of modern geopolitics" at RRAA

The EUA students of the "International Relations" profession, headed by Myasnik Esoyan, Head of the Chair of International Relations at EUA, and Roman Melikyan, Head of Marketing & Public Relations Department at EUA , participated in the Master Class on "Innovative Methods of Modern Geopolitics" held at the Russian Regional Academy in Armenia on March 11, 2022.

ՀԵՀ-ում բացվեց լինգաֆոնային լաբորատորիա

Հայաստանի եվրոպական համալսարանի հետևողական զարգացման և արդիականացման համատեքստում բացվեց անգլերենի ուսուցման լինգաֆոնային լաբորատորիա: Լինգաֆոնային լաբորատորիան հագեցած է համակարգիչներով, պրոեկտորով և այլ անհրաժեշտ պարագաներով:




A Lingaphone Laboratory was opened at EUA

In the context of the continuous development and modernization of the European University of Armenia, a Lingaphone Laboratory for English language teaching was opened. The Lingaphone Laboratory is equipped with computers, projector and other necessary accessories.

Հայաստանում դիվանագետի օրը նշվեց ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Էդգար Ղազարյանի բաց դաս-դասախոսությամբ

2022 թվականի մարտի 2-ին Հայաստանի եվրոպական համալսարանի Իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Միջազգային հարաբերությունների ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ բաց դաս-դասախոսություն՝ 2014-2018թթ. Լեհաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Էդգար Ղազարյանի հետ:




Diplomat's Day in Armenia was celebrated with an open lesson-lecture by RA Ambassador Extraordinary and Plenipotentiary Minister Edgar Ghazaryan

An open lecture-lecture was held on March 2, 2022 on the initiative of the Faculty of Law and International Relations and the Chair of International Relations of the European University of Armenia with Edgar Ghazaryan, the Ambassador Extraordinary and Plenipotentiary Minister of the Republic of Armenia to the Republic of Poland, dedicated to the 10th anniversary of the Diplomat's Day in Armenia & the 30th anniversary of the establishment of diplomatic relations between the Republic of Armenia and the Republic of Poland.

### Վարպետության դաս ուրարտագետ Վահե Սարգսյանի հետ

2022թ. փետրվարի 9-ին Հայաստանի եվրոպական համալսարանի Միջազգային հարաբերությունների ամբիոնում հյուրընկալվեց «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի փոխտնօրեն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, ուրարտագետ Վահե Սարգսյանը, ով «Միջազգային հարաբերություններ» մասնագիտության ուսանողների համար անցկացրեց վարպետության դաս՝ «Ուրարտու պետության քաղաքական դրությունն ու արտաքին կապերը» թեմայով:




### Master class with urartolog Vahe Sargsyan

On February 9, 2022, Vahe Sargsyan, Deputy Director at "Erebuni" Historical & Archaeological Museum-Reserve, urartolog, research scientist at the Institute of History of the National Academy of Sciences of Armenia, was hosted by the Chair of International Relations at European University of Armenia, who held a master class for "International Relations" students on "The Political Situation and Foreign Relations of the Urartu State".

### Ռազմպատրաստվածության դասընթացներ ՀԵՀ ուսանողների համար

Ս.թ. հունվարի 22-ին Հայաստանի եվրոպական համալսարանը՝ ի դեմս արտաքին կապերի և միջազգայնացման գծով պրոռեկտոր Վահրամ Սողոմոնյանի, և «Ինստիգեյթ» ընկերությունը՝ ի դեմս հիմնադիր նախագահ Վահագն Պողոսյանի, նախաձեռնել էին ռազմական պատրաստվածության դասընթացներ ՀԵՀ «Ռոբոտաշինություն և խելացի համակարգեր» ամբիոնի առաջին կուրսի ուսանողների համար, որոնք պետք է զորակոչվեն ՀՀ Զինված ուժեր:




### Military training courses for EUA students

On January 22, 2022, the European University of Armenia, represented by Vahram Soghomonyan, Vice-Rector on External Relations and Internationalization, and Instigate, represented by Vahagn Poghosyan, Founding President, initiated military training courses for the EUA Chair of Robotics and Intelligent Systems who should be called to the RA Armed Forces.

ՀԵՀ Լեզվաբանության ուսանողները մասնակցեցին «Թարգմանչական գործ» թեմայով սեմինարին

2022թ. հունվարի 9-ին ՀԵՀ «Լեզվաբանություն» մասնագիտության ուսանողները մասնակցեցին թարգմանչական ոլորտի վերաբերյալ սեմինարին: Սեմինարավար Աղավնի Քեհեյանը, ով արտոնագրված թարգմանիչ է, «Ինտերպրես Արմենիա» ընկերության հիմնադիրն է և համաշխարհային «Newgen Luxury» ամսագրի գլխավոր խմբագիրը, եղել է ՀԵՀ շրջանավարտ:




EUA Linguistics Students Participated in the Workshop on Translation Studies

On January 9, 2022, EUA Linguistics students participated in the workshop related to the field of translation. The workshop was delivered by Aghavni Keheyan, who is a licensed translator/interpreter, the founder of Interpres Armenia, the editor-in-chief of the world magazine Newgen Luxury, and an undergraduate of our university.

Տարեվերջյան դատախաղ՝ դատական նիստերի դահլիճում

Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Իրավագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները տարեվերջյան դասն անցկացրին ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում:

Դատախաղը նվիրված էր սեփական գույքի տիրապետման խոչընդոտները վերացնելու և ինքնակամ կառույցը քանդելու պահանջներին:




Year-end court game in the courtroom

The 3rd year students of the "Law" profession of the Faculty of Law and International Relations of the European University of Armenia held their end-of-year lesson in the courtroom of the faculty.

The court game was dedicated to the demands to eliminate the obstacles to the possession of one's own property, to demolish the unauthorized structure.

«Ժամանակակից պատերազմների փիլիսոփայություն» թեմայով սեմինար-քննարկում Կարինե Հակոբյանի հետ

«Նոր աշխարհակարգի մարտահրավերներն ու հեռանկարները» խորագրով քննարկումների շարքի շրջանակներում Հայաստանի եվրոպական համալսարանում 2021թ. դեկտեմբերի 10-ին մշակութաբան, հրապարակախոս Կարինե Հակոբյանն բուհի ուսանողների հետ անցկացրեց «Ժամանակակից պատերազմների փիլիսոփայություն» թեմայով սեմինար-քննարկում:




Seminar-Discussion on "Philosophy of Modern Warfare" by Karine Hakobian

A seminar-discussion on the "Philosophy of Modern Wars" with the students of the European University of Armenia was held by Karine Hakobian (culturologist, publicist) on December 10, 2021. It took place within the framework of a series of discussions entitled "Challenges and Perspectives of the New World Order" at the European University of Armenia.

«Դատավորի սոցիալական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով բաց դասախոսություն դատավոր Սիմա Իսկանդարյանի հետ

Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետում անցկացվող բաց դասախոսության շրջանակներում 2021թ. դեկտեմբերի 22-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Սիմա Իսկանդարյանն անցկացրեց «Դատավորի սոցիալական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով բաց դասախոսություն:



Open Lecture with Judge Sima Iskandaryan on "Judge's Social Guarantees in the Republic of Armenia"

Sima Iskandaryan, PhD in Law, Judge of the Court of First Instance of the city of Yerevan, delivered an open lecture on "Judge's Social Guarantees in the Republic of Armenia" on December 22, 2021. It took place within the framework of open lectures at the Faculty of Law and International Relations of the European University of Armenia. The peculiarities of the judge's social guarantees in the Republic of Armenia were presented during the lecture.

«Սոցիալական մեդիայի ազդեցությունը հոգեկան առողջության վրա» թեմայով սեմինար-քննարկում

Վերջերս ՀԵՀ Լեզվաբանության և հոգեբանության ֆակուլտետը կազմակերպեց սեմինար-քննարկում 1-ին կուրսի ուսանողների ակտիվ մասնակցությամբ: Սեմինարը կազմակերպել և իրականացրել է հոգեբանության ամբիոնի դասախոս Նաիրա Հարությունյանը:

Մասնակիցները էդվարդ դե Բոնոյի հայտնի “Մտածողության 6 գլխարկներ” մեթոդի օգնությամբ քննարկեցին «Սոցիալական մեդիայի ազդեցությունը հոգեկան առողջության վրա» թեմայով:




Seminar-discussion on "The Impact of Social Media on Mental Health"

The EUA Faculty of Linguistics and Psychology has organized a seminar-discussion with the active participation recently. The seminar has been organized and conducted by Naira Harutyunyan, a lecturer at the Chair of Psychology.

The participants have discussed the topic "The Impact of Social Media on Mental Health" using the famous "6 Thinking Hats" method by Edward de Bono.

«Ամանորյա ավանդույթներ» թեմայով դասախոսություն ազգագրագետ Սվետլանա Պողոսյանի հետ

2021թ. դեկտեմբերի 20-ին ՀԵՀ-ում տեղի ունեցավ դասախոսություն «Ամանորյա ավանդույթներ» թեմայով: Դասախոսում էր հայոց ազգագրության թանգարանի գիտական գծով փոխտնօրէն, պ.գ.թ., ազգագրագետ Սվետլանա Պողոսյանը:




Lecture on "New Year Traditions" by ethnographer Svetlana Poghosyan

A lecture on "New Year Traditions" was held at EUA on December 20, 2021, by Svetlana Poghosyan, Lecturer, PhD in Historical Sciences, Ethnographer, Deputy Director for Scientific Affairs of the Museum of Armenian Ethnography.

Վարպետաց դաս Իսպանիայի #IDarte ակադեմիայի դասախոսների հետ

ՀԵՀ Զբոսաշրջության, ճարտարապետության և դիզայնի ֆակուլտետի նախաձեռնությամբ 2021թ. նոյեմբերի 24-ին առցանց ձևաչափով տեղի ունեցավ վարպետաց դաս Իսպանիայի IDarte ակադեմիայի դասախոսներ Իկեր Էտքսաբուրուի և Էստի Իրեգի հետ:



Master class with lecturers at IDarte Academy from Spain

On the initiative of EUA Faculty of Tourism, Architecture and Design an online master class was held on November 24, 2021 with Iker Etxaburu & Esti Ireg, lecturers at the IDarte Academy in Spain.

---

Տարվա ամփոփում և ամանորյա տոնակատարություն

2021թ. դեկտեմբերի 17-ին Հայաստանի եվրոպական համալսարանում տեղի ունեցավ նախատոնական միջոցառում՝ «Տարվա ամփոփում և ամանորյա տոնակատարություն» թեմայով, որի շրջանակներում կայացավ ուսանողների տարբեր անվանակարգերում («Մագիստրատուրայի լավագույն ուսանող», «Բակալավրի լավագույն արտերկրյա ուսանող», «Բակալավրի լավագույն ուսանող», «սպորտային ոլորտում ունեցած նշանակալի ձեռքբերումներ համար» և այլն) և ուսանողական խորհրդի որոշ անդամների մրցանակների հանձնման և պարգևատրման արարողակարգը:




Summary of the year & New Year celebration

A pre-holiday event entitled "Summary of the Year & New Year Celebration" took place at the European University of Armenia on December 17, 2012, within the framework of which the students with the various student nominations ("Master Degree Best Student", "Undergraduate Best Foreign Student", "Undergraduate Best Student", etc.) and some of student council members were awarded. with banquet and fairy-tale fireworks.

«Կորոնավիրուս. նոր աշխարհակարգի ձևավորման իրավաքաղաքական ասպեկտը» թեմայով բանախոսություն Վահե Թորոսյանի հետ

Հայաստանի եվրոպական համալսարանում տեղի ունեցավ «Կորոնավիրուս. նոր աշխարհակարգի ձևավորման իրավաքաղաքական ասպեկտը» թեմայով բանախոսություն։ Շուրջ 2 ժամ տևած բանախոսության ընթացքում իրավագիտության թեկնածու Վահե Թորոսյանը ուսանողներին ներկայացրեց համավարակի ծագման և զարգացման էվոլյուցիան՝ դրանից բխող իրավաքաղաքական և աշխարհաքաղաքական հետևանքներով։




The lecture on "Coronavirus. The legal-political aspect of the formation of a new world order" by Vahe Torosyan

The lecture on "Coronavirus. The legal-political aspect of the formation of a new world order" was hosted on December 6, 2021 at the European University of Armenia. During the lecture, which lasted about 2 hours, Vahe Torosyan, PhD in Law, presented the evolution of the origin and development of the epidemic to the students with its legal-political and geopolitical consequences.

Հայաստանի եվրոպական համալսարանի ուսանողները մասնակցեցին հեղինակավոր ICPC մրցույթին

Հայաստանի եվրոպական համալսարանի ՏՏ և կիրառական մաթեմատիկայի ամբիոնի ուսանողներն այս տարի մասնակցեցին ICPC մրցույթին՝ ներկայանալով 2 թիմով։




The EUA Students participated in the prestigious ICPC competition

The EUA Students of the Chair of IT and Applies Mathematics participated on ICPC competition and presented 2 teams.

Արտալսարանային դասընթաց՝ «Բլիզարդ» ՍՊԸ-ում

Հայաստանի եվրոպական համալսարանի Զբոսաշրջության և սպասարկման ամբիոնի 3-րդ կուրսի ուսանողները Սննդի սպասարկում առարկայի շրջանակներում արտալսարանային դասընթաց անցկացրեցին «Բլիզարդ» ՍՊԸ-ում:




Extracurricular training at "Blizard" LLC

The 3rd year students of the Tourism and Service Department of the European University of Armenia conducted an extracurricular training within the subject of Food Service at "Blizard" LLC.

ՀՀ Սահմանադրական դատարանում ՀԵՀ ուսանողները մասնակցեցին դատաքննությանը

2021թ. նոյեմբերի 25-ին և 26-ին ՀԵՀ «Իրավագիտություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները «Իրավագիտության» ամբիոնի դասախոս, ի.գ.թ . Վ. Պողոսյանի ուղեկցությամբ՝ ՀՀ Սահմանադրական դատարանում մասնակցեցին «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասի, 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության և ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի N 65-Ն հրամանի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով դատաքննությունը:




EUA students participated in the trial in the RA Constitutional Court

On November 25-26, 2021, EAU students of the 2nd year by the profession of the "Law", Accompanied by V. Poghosyan, lecturer of the chair of Law, participated in the trial on "Determining the Issue of Compliance with the Constitution" in the RA Constitutional Court.

Արտալսարանային դասախոսություն՝ Backbone Branding բրենդինգային կազմակերպությունում

2021թ. նոյեմբերի 22-ին ՀԵՀ Ճարտարապետության և գրաֆիկ դիզայնի ամբիոնի 1-ին և 2-րդ կուրսի ուսանողները՝ դասախոսներ Նունե Գևորգյանի և Արևիկ Մկրտչյանի ուղեկցությամբ «Դիզայն նախագիծ» դասընթացի շրջանակում այցելեցին Backbone Branding բրենդինգային միջազգային կազմակերպություն:




Extracurricular lecture at Backbone Branding

On November 22, 2021, the 1stand 2nd year students of the Chair of Architecture and Graphic Design of EUA, accompanied by lecturers Nune Gorgyan and Arevik Mkrtchyan, within the framework of the lecturing visited Backbone Branding as an international branding organization, whose activity is to express the essence of the brand through design, which makes the brands come alive.

Արտալսարանային դաս՝ Երևանի Կապույտ մզկիթում և Սուրբ Աննա Կաթողիկե եկեղեցում

2021թ. նոյեմբերի 24-ին ՀԵՀ Զբոսաշրջության և սպասարկման ամբիոնի 2-րդ կուրսի ուսանողները դասախոս Մանե Խաչատրյանի ուղեկցությամբ «Համաշխարհային կրոնի պատմություն» դասընթացի արտալսարանային դասի շրջանակում այցելեցին Երևանի Կապույտ մզկիթ, ուսումնասիրեցին այն որպես կրոնական և ճարտարապետական կառույց:



Extracurricular class was held at the Blue Mosque and St. Anna Katoghike Church in Yerevan

On November 24, 2021, within the extracurricular class accompanied by lecturer Mane Khachatryan the 2nd year students of Chair of Tourism and Service of EUA visited the Blue Mosque in Yerevan as part of the "History of World Religion" and studied it as a religious-architectural structure.

Տեղի ունեցավ «Հետպատերազմյան Հայաստան և Արցախ. հոգեբանական իրողություններ և խնդիրներ» խորագրով գիտական սեմինարը

2021թ. նոյեմբերի 26-ին Հայաստանի եվրոպական համալսարանում կայացավ «Հետպատերազմյան Հայաստան և Արցախ. հոգեբանական իրողություններ և խնդիր-ներ» խորագիրը կրող հոգեբանական ուղղվածությամբ գիտական սեմինարը:




Entitled "Post-war Armenia & Artsakh. Psychological Realities & Problems" Scientific Seminar took place

Entitled "Post-war Armenia & Artsakh. Psychological Realities & Problems" Psychologically oriented Scientific Seminar was held at the European University of Armenia on November 26, 2021 where practical psychologists from both the Republic of Armenia and the Republic of Artsakh participated.

Պարգևատրվել են ՏՏ ոլորտում լավագույն ուսանողները

2021թ. նոյեմբերի 17-ին կայացել է «ՏՏ ոլորտում լավագույն ուսանողների ամենամյա կրթական պարգև» մրցույթի հաղթող ուսանողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը:

«Լավագույն բակալավր» անվանա-կարգում հաղթողներ են ճանաչվել Միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի ամբիոնի 3-րդ կուրսի ուսանողներ Արտյոմ Հակոբյանն ու Լուսինե Մարտիրոսյանը, «Լավագույն մագիստրանտ» անվանակարգում՝ Լիլիթ Ֆարսիյանն ու Սերոբ Ավետիսյանը:



The best students in the field of IT were awarded

The solemn awarding ceremony of the winners of the "Annual Education Award for the best students in the field of IT" competition took place on November 17, 2021.

The winners in the "Best Bachelor" nomination were Artyom Hakobyan and Lusine Martirosyan, 3rd year students of the Chair of Microelectronic Circuits and Systems, and Lilit Farsyan and Serob Avetisyan in the "Best Master" nomination.

| | | |
|---|---|---|
| Վարպետաց դաս՝ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի հետ<br>2021 թ. նոյեմբերի 16-ին ՀԵՀ հյուրընկալվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ով ՀԵՀ Իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների համար անցկացրեց «Տարածաշրջանային արդի զարգացումները և Հայաստանի Հանրապետությունը» թեմայով վարպետաց դաս: |  | A Master Class with Academician Ashot Melkonyan<br>Ashot Melkonyan, Academician of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Doctor of Historical Sciences, Director of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia was hosted at the European University of Armenia on November 16, 2021. |
| Հայաստանի եվրոպական համալսարանի ուսանողների այցը «Կոկա-Կոլա Երջանկության Գործարան»<br>2021թ. նոյեմբերի 9-ին Հայաստանի եվրոպական համալսարանի ուսանողների մի խումբ այցելեց «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ընկերություն: |  | Students of the European University of Armenia visit “Coca-Cola Happiness Factory”<br>On November 9, 2021 a group of students of the European University of Armenia visited Coca-Cola Hellenic Bottling Company Armenia. |
| «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման բնութագիրը և քննությունը» խորագրով դաս-քննարկում ՀԵՀ-ում<br>2021թ. նոյեմբերի 4-ին ՀԵՀ-ի իրավագիտության ամբիոնում անցկացվեց դաս-քննարկում՝ «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման բնութագիրը և քննությունը» խորագրով: Դասընթացը վարեց մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային փորձագետ, ի.գ.թ., դոցենտ, փաստաբան Դավիթ Թումասյանը: |  | A lesson-discussion entitled “Characteristics of Human Trafficking or Exploitation-Investigation” at EUA<br>A lesson-discussion entitled “Characteristics of Human Trafficking or Exploitation – Investigation” was held on November 4, 2021 at the Chair of Law of the European University of Armenia. The training was conducted by David Tumasyan, International Expert on Combating Human Trafficking, Associate Professor, Lawyer. |

Քաղաքական «Ժեստիկուլյացիայի» և դրա դրսևորման ձևերի մասին սեմինար-քննարկում ՀԵՀ-ում

Հայաստանի եվրոպական համալսարան էր հյուրընկալվել միջազգայնագետ-դիվանագետ Կարեն Ղազարյանը, ով վարեց հետաքրքիր սեմինար-քննարկում «Քաղաքական ժեստիկուլյացիա» թեմայով:



Seminar-Discussion on Political "Gesture" and ways of its manifestation in the EUA

International expert-diplomat Karen Ghazaryan was hosted at the European University of Armenia, who conducted an interesting seminar-discussion on "Political Gesture". Students of different faculties took part in the seminar.

«Գրաֆիկական դիզայն, արվեստ թե՞ գիտություն» թեմայով վարպետաց դաս Արամ Մեհրաբյանի հետ

Հայաստանի եվրոպական համալսարանում ՀԵՀ Գրաֆիկական դիզայնի ամբիոնի նախաձեռնությամբ և կազմակերպմամբ՝ տեղի ունեցավ «Գրաֆիկական դիզայն, արվեստ թե՞ գիտություն» թեմայով վարպետաց դաս, որը անցկացրեց «Quadriga USA enterprises» ընկերության հիմնադիր-գործադիր տնօրեն, «Փրինթ-ինֆո» ՀՁ ՍՊԸ-ի համահիմնադիր տնօրեն, «Ռեբիկոն» մշակութաբանական հանդեսի հիմնադիր տնօրեն, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոս Արամ Մակարի Մեհրաբյան:



A master class on "Graphic design, art or science?" with Aram Mehrabyan

By the initiation and organization of the Graphic Design Chair at the European University of Armenia, a Master Class on "Graphic Design, Art or Science?" hold by Aram Mehrabyan, Founder-Executive Director of Quadriga USA Enterprises, Co-founding director of "Printinfo" JV LLC, Founder of Rebicon Cultural Magazine, Lecturer at Yerevan State Academy of Fine Arts.

Հանդիպում-քննարկում ՀՀ ԱԺ ԿԳՄՍ հանձնաժողովի համակարգող-փորձագետ, «Ուսուցման ազգային հիմնադրամի» տնօրեն Մարինե Հակոբյանի հետ

2022 թվականի ապրիլի 30-ին տեղի ունեցավ հանդիպում-քննարկում ՀՀ ԱԺ Կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հանձնաժողովի համակարգող- փորձագետ, «Ուսուցման ազգային հիմնադրամի» տնօրեն Մարինե Հակոբյանի հետ:

Հանդիպումն ընթացավ «Կրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի, ոչ ֆորմալ կրթության ծրագրերի կազմակերպման կարգի և այլ առանցքային հարցերի շուրջ:




A meeting-discussion with Marine Hakobyan, Coordinator-Expert at RA NA Standing Committee on SECYS and Director of the "National Training Fund"

On April 30, 2022, a meeting-discussion took place with Marine Hakobyan, Coordinator-Expert at RA NA Standing Committee on Science, Education, Culture, Youth and Sport and Director of the "National Education Fund".

The meeting focused on the draft law "On Making Amendments to the “Law on Education"”, the procedure for organizing non-formal education programs and other key issues.

Տեղի ունեցավ քննարկում Օքսֆորդի համալսարանի Բակալավրիատի ընդունելության գործառնությունների ղեկավար Մարիաննա Ասատրյանի հետ

Հայաստանի եվրոպական համալսարանն էր հյուրընկալվել Օքսֆորդի համալսարանի Բակալավրիատի ընդունելության գործառնությունների ղեկավար Մարիաննա Ասատրյանը, ով «Ուսանողական ճանապարհորդություն՝ ընդունելությունից մինչև քննություններ» թեմայով քննարկում անցկացրեց ՀԵՀ անձնակազմի ներկայացուցիչների հետ:



A discussion was held with Marianna Asatryan, the Head of Undergraduate Admissions Operations at Oxford University

The European University of Armenia hosted Marianna Asatryan, the Head of Undergraduate Admissions Operations at Oxford University, who conducted a discussion on "Student journey – from admissions to examinations" with the representatives of the EUA staff.

Ստորագրվեց Միջբուհական համագործակցության հուշագիր Հայաստանի եվրոպական համալսարանի և Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի միջև

2022 թվականի ապրիլի 1-ին Հայաստանի եվրոպական համալսարանի և Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի միջև կնքվեց Միջբուհական համագործակցության հուշագիր:



A Memorandum of Inter-University Cooperation was signed between the European University of Armenia and the Armenian State Institute of Physical Culture and Sport

On 1 April, 2022, A Memorandum of Inter-University Cooperation was signed between the European University of Armenia and the Armenian State Institute of Physical Culture and Sport.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հատուկ բանագնաց Ջագմոհան Բաջաջն անցկացրեց վարպետաց դաս՝ «Կարիերայի ուղի ՄԱԿ-ում և միջկառավարական կազմակերպություններում» թեմայով

2022 թվականի մարտի 11-ին Հայաստանի եվրոպական համալսարանի Միջազգային հարաբերությունների ամբիոնի հրավիրված դասախոս, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հատուկ բանագնաց, Մակեդոնիայի Հանրապետության Սկոպյե քաղաքի Դիվանագիտական հետազոտությունների և քաղաքականության հիմնադրամի (DRPF) նախագահ, դոկտոր, պրոֆեսոր Ջագմոհան Բաջաջը «Կարիերայի ուղի ՄԱԿ-ում և միջկառավարական կազմակերպություններում» թեմայով վարպետաց դաս անցկացրեց ՀԵՀ ուսանողների համար:




UNESCO Special Envoy Jagmohan Bajaj held a Masterclass on “Career path in United Nations and Intergovernmental organizations”

On March 11, 2022, Prof., Dr. Jagmohan Bajaj, a Guest Lecturer of the Chair of International Relations of the European University of Armenia, UNESCO Special Envoy, President of the Foundation for Diplomatic Research and Policy (DRPF) in Skopje, Macedonia, held a Masterclass for the EUA students on "Career path in United Nations and Intergovernmental organizations".

<u>«Կենսաներշնչված էլեկտրոնային համակարգերը կենսաբժշկական և գյուղատնտեսական սննդի համար» թեմայով առցանց դասախոսություն պրոֆեսոր Դանիլո Դեմարկիի հետ</u>

2021թ. դեկտեմբերի 17-ին ՀԵՀ Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Վազգեն Մելիքյանի նախաձեռնությամբ՝ անցկացվեց «Կենսաներշնչված էլեկտրոնային համակարգերը կենսաբժշկական և գյուղատնտեսական սննդի համար» թեմայով առցանց դասախոսություն, որը վարեց Իտալիայի Թուրինի Պոլիտեխնիկական համալսարանի Էլեկտրոնիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի պրոֆեսոր, Միկրոէլեկտրոնային և նանոէլեկտրոնային համակարգերի լաբորատորիայի դեկավար, 250-ից ավել գիտական աշխատությունների հեղինակ Դանիլո Դեմարկին:




<u>Online lecture on “Bio-Inspired Electronic Systems for Biomedics and AgriFood” by Professor Danilo Demarchi</u>

An online lecture on "Bio-Inspired Electronic Systems for Biomedics and AgriFood" was held on December 17, 2021, initiated by Vazgen Melikyan, Doctor of Technical Sciences, Head of the Chair of Microelectronic Circuits and Systems of the European University of Armenia. It was chaired by Danilo Demarchi, Full Professor at Politecnico di Torino, Department of Electronics and Telecommunications, with the tenures of “Introduction to MEMS and BioMEMS” for Biomedical and Electronics Engineering, of “Design of Microsystems” for Electronics Engineering and Nanotechnologies for ICT, of “Bio-NanoElectronics” for the PhD School in Electronics and Telecommunications and of "Electronics" for the Bachelor Degree in Biomedical Engineering.

2021թ. հոկտեմբերի 21-ին Հայաստանի եվրոպական համալսարանում տեղի ունեցավ բուհի հիմնադրման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստ:



On 21 October 2022, a solemn session dedicated to the 20th anniversary of the foundation of the university was held at the European University of Armenia.